

# ՖՐՈՒՆԶԵ




ՊԵՏՐՈՍ

1939

ՅԵՐԵՎԱՆ

31 JAN 2018

# ՄԻՒՍՅՈՒՆ ԿԱՍԻՆՅԵՎԻԶ ՖՐՈՒՆԶԵ



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Խ Ո Ղ Թ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1989

**Ֆրունզեի** ժողովածուն պարունակում է ընկեր Մտալինի ու Վարդիլովի կարծիքները Մ. Վ. Ֆրունզեի մասին Այդ կարծիքներն ամենից լավ են շնուեթադրում Մ. Վ. Ֆրունզեյին վորպես մեր կուսակցության նվիրված զավակի, վորպես բողեբիկի, Իվանովո-Վոյնենսկի ջանվորների սանի, վորպես տաղանդավոր զորավարի և Կարմիր Բանակն ամբաջնդելու համար անդուլ պայքարողի։ Մ. Վ. Ֆրունզեյի ժողովածույում զետեղված ինքնակենսագրութունը, վոր նս գրել է 1921 թ., կարճ ու համառոտ դարձվածքներով յուսարանում է Մ. Վ. Ֆրունզեյի կյանքի կարեորաշույն մոմենտները։



Մ. Ֆրունզե



1-374691

Михаил Васильевич ФРУНЗЕ  
Гиз Арм ССР, Ереван, 1939

Մ. Վ. Շրունգեյի քաղման ժամանակ արտասանած  
հառք

Ընկերներ, յես ի վիճակի չեմ յերկար խոսելու, իմ հոգեկան դրությունը դրան չի տրամադրում: Միայն այն կասեմ, վոր ի դեմս ընկ. Ֆրունգեյի մենք կորցրինք մեր ժամանակի ամենամաքուր, ամենաաղնիվ և ամենաանվեհեր հեղափոխականներից մեկին: Կուսակցությունն ի դեմս ընկ. Ֆրունգեյի կորցրեց իր ամենահավատարիմ և ամենակարգապահ ղեկավարներից մեկին:

Խորհրդային իշխանությունն ի դեմս ընկեր Ֆրունգեյի կորցրեց մեր յերկրի ու մեր պետութան ամենահամարձակ և ամենախելացի կառուցողներից մեկին: Բանակն ի դեմս ընկ. Ֆրունգեյի կորցրեց ամենասիրված և ամենահարգված ղեկավարներից ու ստեղծողներից մեկին: Ահա թե ինչու կուսակցությունը այդպես վշտանում է ընկ. Ֆրունգեյի կորստյան առթիվ:

Ընկերներ, այս տարին մեզ համար նորովի տարի չէր: Նա մեր շարքերից խլեց մի շարք ղեկավար ընկերներ: Բայց այդ քիչ դուրս յեկավ և մի նոր զոհ էա պետք յեկավ: Գուցե, հենց այդպես էլ պետք է, վորպեսզի հին ընկերներն այդպես հեշտ ու հասարակ կերպով գերեզման իջնեն: Դժբախտաբար մեր յերի-

առարգ ընկերներն այդպես հեշտ և ամենեին ել  
այդպես հասարակ կերպով չեն բարձրանում հները  
փոխարինելու համար: Ուրեմն հավատանք, հույս ա-  
ծենք, վոր կուսակցութիւնն ու բանվոր դասակարգը  
բոլոր միջոցները ձեռք կառնեն, վորպեսզի հեշտացնեն  
հներին փոխարինելու համար նոր ընկերներ կոփելու  
գործը:

Ռուսաստանի Կոմունիստական կուսակցութեան  
Կենտրոնական Կոմիտեն ինձ հանձնարարել է արտա-  
հայտել ամբողջ կուսակցութեան վիշտը ընկ. Ֆրոն-  
դեյին կորցնելու առթիվ: Թող իմ համառոտ ճառը  
լինի այդ վշտի արտահայտիչը, մի վիշտ, վորն ան-  
սահման է, և վորը յերկար ճառերի կարիք չի դրում:

„Правда“ № 253 (3184)  
5 նոյեմբերի 1925 թ.

Մ. Վ. Ֆրոնդեյի ինքնակենսագրութեանը<sup>\*)</sup>

Յես ծնվել եմ 1885 թ. Թուրքեստանի յերկրի  
Սեմիրեչյեյի մարզի Պիչպեկ քաղաքում: Իմ հայրը  
ծաղումով Սերսոնի նահանգի Տիրասպոլի դավառի  
Ջախարեի վոլոստի գյուղացի յեր, ազգութեամբ մու-  
ղավ: Ձինփորական ծառայութեան մտնելու ժամանակ  
ուղարկվել է Թուրքեստանի զորքերի կազմի մեջ: Ձին-  
փորական ծառայութիւնը վերջացնելուց հետո մնացել  
է Սեմիրեչյեյում, վորտեղ ծառայել է վորպես Ֆելդ-  
շեր: Մայրս յեղել է Վորոնեժի նահանգի գեղջիուհի և  
70-ական թվականներին զաղթել է Սեմիրեչյեյ:

Սկզբնական կրթութիւնս ստանալով դպրոցում,  
յես մտա Վերնի քաղաքի դիմնադիան, վորը և ավար-  
տեցի 1904 թ.: Գիմնադիան ավարտելուց հետո մտա  
Պետերբուրգի Պոլիտեխնիկական ինստիտուտը: Առա-  
ջին ծանոթութիւնը հեղափոխական գաղափարների  
հետ ստացա դեռ դիմնադիսյում յեղած ժամանակ,  
վորտեղ մասնակցել եմ ինքնակրթութեան խմբակնե-  
րին: Համալսարանական կյանքի հենց առաջին տար-  
վանից մտա սոցիալ-դեմոկրատական կուսակցական

<sup>\*)</sup> Գրվել է 1921 թ., յերբ Ֆրոնդեյն ՌԽՖՍՀ ազգական ու  
ծովային զործերի ժողովրդական կոմբարի՝ Ուկր. ԽՍՀ Ժողկոմ-  
խորհին կից լիազորը և Ուկրաինայի ու Ղրիմի զորքերի հրամա-  
նատարն եր.—Խմբ.

կազմակերպութեան մեջ: Ուսանող լինելու սկզբնական շրջանում հենց անմիջապես հարել եմ բուլչեիկյան (չարժմանը) հոսանքին:

1904 թ. վերջերից սկսել եմ ակտիվ մասնակցութիւնն ցույց տալ բուլչեիկյան զանազան կազմակերպութիւնների գործունեութեանը: 1905 թ. սկզբում սկսել եմ աշխատել Իվանովո-Վոդնեսենսկի արդյունաբերական ուսումնամ: Յեղել եմ տեքստիլչիկների նշանավոր գործադուլի կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը 1905 թ., մի գործադուլ, վորն ընդգրկեց Իվանովո-Վոդնեսենսկի արդյունաբերական ամբողջ ուսումը: Յեղել եմ ՌՍԴԲԿ Ստոկհոլմի IV միավորիչ համադումարի պատգամավոր Իվանովո-Վոդնեսենսկի կոմիտեյի կողմից: Յեղել եմ ՌՍԴԲԿ Իվանովո-Վոդնեսենսկի ոկրոգային կազմակերպութեան և տպա Իվանովո-Վոդնեսենսկի միութեան կազմակերպիչ, մի միութեան, վորն ընդգրկում եր ինչպես Իվանովո-Վոդնեսենսկի քաղաքային կազմակերպութեանն, այնպես էլ Իվանովո-Վոդնեսենսկի արդյունաբերական ամբողջ ուսումը (Իվանովո-Վոդնեսենսկ, Շույա, Կինեչմա, Տեյկովո, Ռոդնիկի, Յուրյեվեց, Յուժա և այլն):

Սկսած 1904-ից մինչև 1907 թ. սկիզբը բազմիցս ձերբակալվել եմ: 1907 թ. սկզբին ձերբակալվեցի Շույա քաղաքում: Դատվել եմ ՌՍԴԲ (բուլչեիկիների) Կ. պատկանելու մեջ մեղադրվելով և դատապարտվել եմ 4 տարվա տաժանակիր աշխատանքի: Պատիժը կրելու ժամանակ նորից դատի յեմ տրվել վոստիականութեանը զինված դիմադրութեան ցույց տալու գործով: Դատ-

վել եմ և դատապարտվել մահվան: Հանցանշաններէ լիակատար բացակայութեան, պրոցեսուալ մի շարք ձեւեր ակնհայտորեն խախտված լինելու պատճառով ռազմական զլխավոր դատարանը դատաւճիռը բեկանում ե և նոր դատ ե նշանակում: Դատվել եմ յերկրորդ անգամ և նորից դատապարտվել եմ մահվան, մահապատիժը փոխելով տաժանակիր աշխատանքների: Տալլա եւ 6 տարվա տաժանակիր աշխատանքի պատժի առաջիտ ժամկետը յերկարացնելով: Պատիժը կրել եմ Վլադիմիրի կենտրոնական, Նիկոլայեվի կենտրոնական և Ալեքսանդրովսկի կենտրոնական (Սիբիր) տաժանակիր բանտերում: Ձեռք կերտելու կապակցութեամբ 1914 թ. վերջում արտարանակեցվում եմ Խրուստի նահանգի Վերխուլենսկի դավառում: 1915 թ. ամառը նորից ձերբակալվում եմ կազմակերպութեան ստեղծելու պատճառով: 1915 թ. ոգոստոսին բանտից փախչում եմ և աշխատում եմ անլեզալ կերպով Արդըրայկայան մարզում Վ. Գ. Վասիլենկո ազգանունով:

1915 թ. վերջում մի քանի ընկերների հետ միասին ստեղծում եմ «Восточное обозрение» անունով մեծ շարաթաթերթ և նրա խմբադիրներից մեկն եմ լինում: Պահնորդարանի կողմից հայտարարվելով և մի յերջանիկ պատահականութեան շնորհիվ ձերբակալումից ազատվելով, փախչում եմ Ռուսաստան: «Միխայլով» ազգանվան տակ ընկնում եմ Արևմտյան ճակատ՝ Համառուսաստանյան ղեմստվային միութեանը: Այստեղ աշխատում եմ անլեզալ հեղափոխական կազմակերպութեան ստեղծելու վրա: Փետրվարյան հեղափոխու-

Թյան մոմենտին կանգնած եմ յեղել ընդհատակյա հեղափոխական կազմակերպության գլուխ, մի կազմակերպության, վորի կենտրոնը դտնվում եր Մինսկում և վորը բաժանմունքներ ուներ X և III բանակներում:

Փետրվարյան հեղափոխության սկզբից դարձա Մինսկի, Բելոռուսիայի, Արևմտյան ճակատի հեղափոխական շարժման ղեկավարներից մեկը: Անց եմ կացրել Մինսկի վոստրիկանության ու ժանդարմերիտյի զինաթափումը և դարձել եմ Մինսկի քաղաքացիական միլիցիայի պետը: Յեղել եմ Մինսկի բանվորական ղեկուտատների Խորհրդի կազմակերպիչը և գործադիր կոմիտեյի մշտական անդամը: Յեղել եմ Բելոռուսիայի գյուղացիական ղեկուտատների Խորհուրդների կազմակերպիչ, անց եմ կացրել Բելոռուսական գյուղացիության յերկու համագումար: Յեղել եմ Բելոռուսիայի գյուղացիական ղեկուտատների Խորհուրդների առաջին գումարման նախագահ և գործադիր կոմիտեյի նախագահ: Յեղել եմ գյուղացիական ղեկուտատների Համառուսական համագումարի նախագահության անդամ Բելոռուսական մարդի կողմից: Յեղել եմ Արևմտյան ճակատի բանակների համագումարի կազմակերպիչներից մեկը և համագումարի հետևանքով ընտրվել եմ Արևմտյան ճակատի բանակների ճակատային կոմիտեյի անդամ: Յեղել եմ Մինսկում հրատարակվող բուլլետենյան լրագրերից մեկի՝ «Звезда»-ի խմբագիրը: Կորնիլովյան ռերերին ճակատային կոմիտեյի և Մինսկի խորհրդի գործադիր կոմիտեյի միտակց նիստը ինձ նշանակում

և Մինսկի ճակատամասի հեղափոխական զորքերի շտաբի պետ:

Ոգոստոսի վերջերքից մեկնեցի Վլադիմիրի նահանգի Շույա քաղաքը, վորտեղ դարձա բանվորական, զինվորական ու գյուղացիական ղեկուտատների Խորհրդի նախագահ:

Ընտրվել եմ Շույայի քաղաքային դումայի նախագահ և Շույայի դավառական գեմստվային ուսարավայի՝ նախագահ: Շույա քաղաքի կողմից յեղել եմ ներկայացուցիչ Պետրոգրադի Դեմոկրատական խորհրդակցությանը:

Հոկտեմբերյան հեղափոխության մոմենտին կանգնել եմ Շույա-Իվանովոյի ռայոնի զինված ուժերի գլուխ և հոկտեմբերի 30-ին բերել եմ Մոսկվա բանվորներից ու զինվորներից կազմված յերկու հազարանոց զինված մի ջոկատ: Անմիջական մասնակցություն եմ ցույց տվել Հոկտեմբերյան մարտերին: Յերբ կազմակերպվեց Իվանովո-Վոդնեսենսկի նահանգը, դարձա նահ. գործկոմի նախագահ: Ծարունակ յեղել եմ կուսակցության՝ Շույայի դավառական կոմիտեյի և կուսակցության՝ Իվանովո-Վոդնեսենսկի նահանգական կոմիտեյի նախագահ: Յեղել եմ Խորհուրդների բուլոր համագումարների պատգամավոր, սկսած յերկրորդ համագումարից:

Ընտրվել եմ Համառուսական սահմանադիր ժողովի անդամ Վլադիմիրի նահանգի կողմից, բուլլետենների կուսակցության կողմից:

1918 թ. գարնան ու ամառվա ընթացքում նահ. գործկոմի նախագահի և կուսակցության նահ. կո-

միտեյի նախագահի պարտականութիւնները կատարելու հետ միաժամանակ յեղել եմ նահանգական ուղմական կոմիտար և նահ. ժողտնտխորհի նախագահ: Յարոսլավլի աստամբուլթյունից հետո նշանակվել եմ Յարոսլավլի ոկրուդի ուղմական կոմիտար: 1918 թ. դեկտեմբերին նշանակվեցի Արևելյան ճակատում IV բանակի հրամանատար:

1919 թ. ապրիլին, այն մոմենտին, յերբ Կոլչակի բանակի հարձակումը հասնում է ամենաբարձր դարգացման և սպառնալիք է ստեղծում Կազանի, Սիմբիրսկի ու Սամարայի համար, նշանակվում եմ Արևելյան ճակատի հարավային մասի չորս բանակների (4-րդ, 1-ին, Թուրքեստանի և 5-րդ) հրամանատար: Կազմակերպել և անց եմ կացրել Կոլչակի հարձակվող բանակների դեմ ուղղված թևային հարվածը Բուզուլուկի ուսյունից, վորը հասցրեց Կոլչակի հարձակուղան ուղերացիայի վիժմանը և նրա բանակի շտապ նահանջին Արևելյան ամբողջ ճակատում:

Մնալով հարավային խմբի հրամանատար, ընդունել եմ Թուրքեստանի այն բանակի անմիջական ղեկավարութիւնը, վորը գործում եր Ուֆայի ուղղութեամբ: Անց եմ կացրել Ուֆայի ուղերացիան և հունիսի 7-8-ին Բելայա դեան անցնելով ջախջախել եմ հակառակորդի գործերը, վորոնք պաշտպանում էին Ուֆայի մատուցները, և հունիսի 9-ին դրավել եմ Ուֆան: Այս ուղերացիայի համար պարզեվատրվել եմ Կարմիր դրոշի շքանշանով:

Հունիսի վերջին նշանակվել եմ Արևելյան ճակատի բոլոր բանակների հրամանատար: Ղեկավարել եմ

ճակատում յեղած բանակների ուղերացիաները մինչև Չելյաբինսկը մեր կողմից դրավելը և Ուրալի լեռներն անցնելը ամբողջ ճակատում:

1919 թ. ոգոստոսին Արևելյան ճակատը յերկու ուղղութեան բաժանվելուց հետո (Սիբիրի և Թուրքեստանի ուղղութեան) նշանակվել եմ Թուրքեստանի ճակատում յեղած բանակների հրամանատար (XI, IV, I բանակներ և Թուրքեստանում գտնվող դորքեր): Սեպտեմբեր ամսվա ընթացքում կատարել եմ Կոլչակի հարավային՝ գեներալ Բելովի հրամանատարութեան տակ գտնվող բանակի շրջապատման ու վորջնչացման ուղերացիան: Ուղերացիաների հետևանքով վերականգնվեց մեր կապը Թուրքեստանի հետ և տեղի ունեցավ Որենբուրգի կազակութեան անցումը խորհրդային իշխանութեան կողմը:

Դեկտեմբերի ընթացքում ղեկավարել եմ Ուրալի ճակատը լիկվիդացիայի յենթարկելու գործողութիւնները, վորը և ավարտել եմ դեկտեմբերի վերջին մեր կողմից Գուրյեվ քաղ. վերցնելուց և Կասպից ծովի ափերը դրավելուց հետո:

Մնալով Թուրքեստանի ճակատի բանակների հրամանատար, նշանակվել եմ Համառուսական կենտրոնական գործադիր կոմիտեյի՝ Թուրքեստանի գործերի վերաբերյալ հանձնաժողովի, ինչպես և ՌԿԿ Կենտրոնական կոմիտեյի Թուրքեստանի գործերի վերաբերյալ հանձնաժողովի անդամ:

1920 թ. փետրվար 15-ից մինչև ոգոստոս աշխատել եմ Թուրքեստանում: Ղեկավարել եմ Սեմիլչայի սպիտակ-դվարդիական ճակատի լիկվիդա-



Համ Կ(բ)Կ ԿԿ Կուսհրատ, 1936 թ.

ԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՐԵԿԱՍ ՄԻՆԱՅԻԼ ՎԱՍԻԼՅԵՎԻՉ  
ՖՐՈՒՆԶՅԵՑԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Անժամանակ ծանր կորուստը չճեցուցիչ ազդեցություն է թողնում. մոտիկ մարդու հանկարծակի կորուստը բոլորովին ճնշում է...

Միբելի, սրտակից Մելայի մահը մեզ, նրա բարեկամների համար սարսափելի անակնկալ էր:

Միխայիլ Վասիլյեվիչի հիվանդություն մասին մենք բոլորս լավ իրազեկ էյինք: Բայց վո՛չ ինքը Միխայիլ Վասիլյեվիչը, վո՛չ մենք, նրա բարեկամները, այդ հիվանդությունը լուրջ չէյինք համարում և համենայն դեպս նրա կյանքի համար վտանգավոր չէյինք համարում:

Անցյալ տարվա աշնանը (հոկտեմբեր) մենք Միխայիլ Վասիլյեվիչի հետ մեր մի ամբողջ ամսվա արձակուրդն անց կացրինք Սդրբեջանում վորս անեյով: Լեռները, ձորերը և առհասարակ, յուրահատուկ, դժվարանցանելի այն վայրը, վորտեղ մենք վորս էյինք անում, մեզ ստիպում էր ամեն րոպե «արգելքներ» հաղթահարել և Միխայիլ Վասիլյեվիչը, վորը մոլի և լավ վորսորդ էր, հողնել չդիտեր: Լուսաբացին վեր կենայով, մենք հաճախ միայն մութն ընկնելիս էյինք սուլ վերադառնում, վորպեսզի լուսաբացին նորից

ցիայի աշխատանքները: Ուղոստոսի վերջին դեկավարել էմ Բուխարական եմիրություն լիկվիդացիայի և Բուխարական ժողովրդական խորհրդային հանրապետություն ստեղծելու ոպերացիաները: 1920 թ. սեպտեմբերին նշանակվել էմ Հարավային (Վրանդեւի դեմ ուղղված) ճակատի բանակների հրամանատար: Նոյեմբերի վերջերին վերջացրել էմ հարավ-ուսական հակահեղափոխության լիկվիդացիայի վերաբերյալ ոպերացիան, դրավելով Ղրիմի թերակղզին:

Արտաքին ճակատները լիկվիդացիայի յենթարկելուց հետո նշանակվել էմ Հանրապետության հեղափոխական ոպմական խորհրդի լիազոր Ուկրաինայում և Ուկրաինայի բոլոր զինված ուժերի հրամանատար: Համաուկրաինական նոյեմբերյան կոնֆերենցիայում ընտրվել էմ Ուկրաինայի բոլշևիկների կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեյի անդամ:

Ուկրաինայի խորհուրդների համադումարում ընտրվել էմ Համաուկրաինական ԿԳԿ-ի անդամ: Յեղել էմ Համաուսական կենտրոնական դործադիր կոմիտեյի բոլոր դումարումների անդամ, սկսած յերրորդից: Ռիկի X համադումարում ընտրվել էմ Ռիկի Կենտրոնական կոմիտեյի անդամ:

Ներկայումս աշխատում էմ Ուկրաինայում վորպես հանրապետության Հեղափ. ոպմ. խորհրդի լիազոր և վորպես Ուկրաինայի ու Ղրիմի զինված բոլոր ուժերի հրամանատար:

Մ. Վ. Ֆրուևցե  
«Ընտիր յերկեր» Կուսհրատ, Մոսկվա, 1934.

չարժւենք դեպի նոր վայրեր, փորոնք նույնքան ժայռոտ ու ձորոտ եյին: Մտածել դիւտայի կամ քիչ թե շատ կանոնավոր սննդի մասին միանգամայն անհնար էր: Մնվում եյինք «արտոտով» — տեղական դյուղացիութեան կերակրով, բայց չնայած այդպիսի կյանքին, Մելիսայիլ Վասիլյեվիչն այնուամենայնիվ կաղզուրովեց, ամբասնդովեց և իրեն հիսնալի յեր զգում:

Այս հանդամանքը մեզ ստիպեց ավելի ևս հավատալ այն բանին, վոր Մելիսայիլ Վասիլյեվիչի հիվանդութիւնն այնքան ել վտանգավոր չէ, թեև ուսերացեալի մասին արդեն վաղուց եյին խոսում:

Պարբերաբար կրկնվող հիվանդազին յերևուցիւնները, վորոնք Մելիսայիլ Վասիլյեվիչի չափից դուրս բաղմամբայ աշխատանքի արդշունքն եյին նրան յերբեմն կարճ ժամանակով շարքից դուրս եյին հանում, բայց ամեն անգամ շատ արագ վերացվում եյին հասարակ դադարի, հանգստի միջոցով:

Ընթացիկ տարվա հուլիսին Մելիսայիլ Վասիլյեվիչը յերկու անգամ ավտոմոբիլային ավարիայի յենթարկվեց, ընդվորում յերկրորդ անգամը ճակատի, վտռի ու ձեռքի բավական զգալի վնասվածքներ ստացավ: Սակայն ավարիայից մի շաբաթ հետո բժիշկները Մելիսայիլ Վասիլյեվիչին թույլ տվին վորսի գնալ: Վորսը նրա համար լավագոյն հանդիստն ու ժամանցն էր խիստ բարձ ու ծանր աշխատանքի ժամանակաշրջանների միջև ընկած կարճ ընդմիջումների ընթացքում: Յեւ արդեն ողոստոսի 1-ին, հենց վոր Մելիսայիլ Վասիլյեվիչը վնասվածքներից կաղզուրովեց, մենք նրա հետ մի ամբողջ որ անց կացրինք վորս

անելով, Մոսկվայից 130 կիլոմետր հեռավորութեան վրա դռնվող ճահճներում: Դրանից հետո Մելիսայիլ Վասիլյեվիչի տրամադրութեանը նորից դարձավ առույգ ու կենսուրախ:

Բայց ողոստոսի վերջին Մելիսայիլ Վասիլյեվիչը սկսում է դանդատվել ձեռքում և վտռում զղացած ցավից: Ավտոմոբիլի ավարիայի ժամանակ ստացած վնասվածքները զուր չանցան: Պետք յեղավ վերաբուժական միջամտութիւն ձեռքում և վտռում սկսված տեղական բորբոքման պրոցեսները լիկվիդացիայի յենթարկելու համար: Մելիսայիլ Վասիլյեվիչի կարճատև կերպով հիվանդանոցում մնալը, բժիշկների հողատարութիւնը իրենց դորձը տեսան և Մելիսայիլ Վասիլյեվիչը նորից առողջ է և լի յե յեռուն ենեկրվալով:

Սեպտեմբերի սկզբին Մելիսայիլ Վասիլյեվիչը դալիս է Մուխալատկա (Ղրիմ) հանգստանալու, նրա հետ միասին զինվորական բժիշկ ընկ. Մանդրիկան: Բժիշկից մենք իմանում ենք (այն ժամանակ Մախալատկայում հանգստանում եյին Ստալինը, Շիրյալտովը, յես և այլ ընկերներ), վոր Մելիսայիլ Վասիլյեվիչի ներսում արդեն ութ որ է շարունակվում է արյունազեղում և վոր այդ նույնը, թեև ավելի թույլ ձեռով, կատարվում է նաև այժմ: Մելիսայիլ Վասիլյեվիչն ինքը դրան մեծ նշանակութիւն չէր տալիս, և արդեն յերկրորդ թե յերրորդ որը պատրաստվում էր վորսի գնալ Այ-Պետրի լեռան ռայոնը: Մենք նրան համոզում եյինք վոր չգնա, վորովհետև նրա տեսքը այնքան ել առողջ չէր, մենք ասաջարկում եյինք նախ

ամբաստանողի և ապա միայն վորսորդութիւնն անել: Բայց հորդորները չողնեցին և մենք չորսով — Մի-  
խայիլ Վասիլյեվիչը, ընկ. Շէկիրյատովը, բժիշկ  
Սանդրիկան և յես մի քանի ժամ թափառում ելինք  
Այ—Պետրիի քարքարոտ լանջերին:

Չնայած անհաջող վորսին Միխայիլ Վասիլյեվիչը  
տառաացիորեն վերածնվեց, դարձավ նորից նույն կեն-  
սուրախ, սիրալիր և ուրախ մարդը:

Այնուամենայնիվ բժիշկի հայտարարութիւնը Մի-  
խայիլ Վասիլյեվիչի Փիղիկական վիճակի մասին մեզ  
ւտիպեց մտածել նրա առողջութիւն մասին: Մենք  
բոլորս տեսնում ելինք, վոր Միխայիլ Վասիլյեվիչին  
անհրաժեշտ է ամենից առաջ բացարձակ հանգիստ:  
Յես կտրուկ կերպով հրաժարվեցի Միխայիլ Վասիլ-  
յեվիչի հետ վորսի գնալուց, վորով, իհարկե, բարե-  
կամիս վշտացրի: Բայց Միխայիլ Վասիլյեվիչն ինքը  
չեր հանդուրանում, նապաստակների վորսի յեր գնում,  
զոհ եր, զրգուլած եր և յերազում եր իսկական, մեծ  
վորսի մասին:

Բայց ստամոքսա—աղիքային տրակտի մեջ տեղի  
ունեցող արյան զեղումներն իրենց զգալ ելին տալիս:  
Միխայիլ Վասիլյեվիչն սկսեց տկարութիւն զգալ և  
պառկեց:

Բժիշկ Մանդրիկան մեկնեց Մոսկվա և այնտեղից  
ուպասարկու պերսոնալի հետ միասին յեկան բժիշկ Ռո-  
զանովն ու կասատկինը: Մոսկվայում շտապ միջոցներ  
ձեռք առնվեցին Միխայիլ Վասիլյեվիչին բժշկելու հա-  
մար:

Միխայիլ Վասիլյեվիչը ամբողջ յերկու շաբաթ



դանվում եր բժշկական աշալուրջ հսկողութիւն տակ,  
վորի հետևանքով բժիշկները հաստատ համոզման  
յեկան, վոր անհրաժեշտ է ուղերացիա անել:

Մոսկվայի բժիշկների ժամանումը Միխայիլ Վա-  
սիլյեվիչի վրա վատ ազդեց: Նա բազմիցս ինձ պնդում  
եր, թե իրեն լավ է զգում, վոր տկարութիւնը շու-  
տով կանցնի և այլն: Յեվ միայն այն ժամանակ,  
յերբ անալիզը հաստատեց չընդհատվող արյունազե-  
ղութիւնն առկայութիւնը, Միխայիլ Վասիլյեվիչը  
սկսեց ավելի լուրջ վերաբերվել իր առողջութիւն  
վիճակին և սկսեց հակվել զեպի ուղերացիայի միտքը:

Սեպտեմբերի 29—ին Միխայիլ Վասիլյեվիչը մեզ  
հետ, Կի—ի անդամներին հետ միասին մեկնեց Մոսկ-  
վա: Մենք դնում ելինք Կի—ի պլենումին, իսկ նա  
դնում եր, վորպեսզի պառկի հիվանդանոց և շուտ  
պրծնի ձանձրալի, ծանր հիվանդութիւնից: Պետք եր  
անցնել վործնական ժամանակաշրջան: Հիվանդանո-  
ցում պառկած, Միխայիլ Վասիլյեվիչը, ինչպես միշտ,  
իրեն չըջտպատել եր ուսներեն և ֆրանսերեն զրքերով  
և համբերութիւնով սպասում եր բժշկական դննու-  
թիւնների հետևանքներին:

Մենք հաճախ և յերկար նստում ելինք նրա մոտ  
Կրեմլի հիվանդանոցի 19—րդ պալատում: Այս փոքրիկ  
սենյակը շուտով դարձավ յուրահատուկ քաղաքական  
մի ահումբ, վորտեղ քննարկվում ու լուծվում ելին  
ամենաբարդ և ամենաբաղձաղան հարցեր:

Բնորոշ է Միխայիլ Վասիլյեվիչի համար նրա  
անկշտում ցանկութիւնն ամեն ինչ իմանալու, իրա-  
զեկ լինելու բոլոր յեպրքերին և անձամբ խոսքով ու

1-3744491



ըրծով մասնակցել այդ դեպքերին: Նա բարեկամներին պահանջում էր հաճախակի այցելություններ և մանրամասն ինֆորմացիա և մենք սիրով կատարում էինք նրա ցանկությունը:

Ճիշտ չեմ հիշում թե յե՞րբ, հոկտեմբերի 7-ի և 10-ի միջև, մենք ըստ սովորականի յերկար նստած էինք Միխայիլ Վասիլյեվիչի մոտ: Նրա մոտից դուրս դալիս մենք իմացանք, վոր այժմ հավաքվել են 17 լավադույն բժիշկներ ու պրոֆեսորներ կոնսիլիումի համար: Մենք չհամբերեցինք և հենց այդտեղ էլ բժիշկ Ռոդանովից հարցրինք նրա կարծիքը ոպերացիայի անհրաժեշտության մասին: Ռոդանովը վստահ կերպով պատասխանեց, վոր ինքը «կողմնակից ե ոպերացիային»: Ուշ դիշերով հաղորդեցին, վոր կոնսիլիումը միաձայն վորոշել է ոպերացիա անել:

Յես մեկնեցի իմ արձակուրդս վերջացնելու, վստահ, վոր ոպերացիան բարեհաջող յելք կունենա: Յե՛վ ինչպես կարելի յեր անհանդիստ լինել, յերբ Ռոդանովն ու կասատկինը, վորոնց հետ մենք այնքան հաճախ խոսակցություն ենք ունեցել Միխայիլ Վասիլյեվիչի առողջության մասին, մեղ համոզում էին, վոր անհանդստանալու վոչ մի հիմք չկա: Յես հավատացի: Հավատացի այնպես, ինչպես հավատացել էյինք մենք բոլորս, ինչպես հանդիստ ու վստահ դանակի տակ սլառկեց մեր անմոռանալին, պանծալիներին լավադույնը, բարեկամ ու ընկեր Միխայիլ Վասիլյեվիչը:

Հոկտեմբերի 31-ին Սեվաստոպոլից կանչում են

հեռախոսի մոտ, հաղորդում են ընկեր Մտալինի հեռագիրը: Իմանում եմ սարսափելի, հրեշավոր լուրը՝ «Փրունդեն այսօր վախճանվեց սրտի կաթվածից...» Սոսկալի յե... Մաղերդ գլխիդ բիզ-բիզ են կանգնում: Գիտակցությունն ընդդիմանում է ընդունելու ահա-վոր լուրը... Ինչպե՞ս, ինչո՞ւ:

Բայց ընկեր Մտալինի հեռագիրը աչքներիս առաջն է: Նա անմիջապես կանչում է: Ասել ե, թե ճշմարիտ ե... Գնում եմ և ճանապարհին մտքումս հերթով անցնում են միատեղ ծանր և բերկրալից աշխատանքի այն օրերը, ամիսներն ու տարիները, վոր անց ենք կացրել այն մարդու հետ, վորը չկա, այն մարդու հետ, վորին սիրել եմ ինչպես յեղբոր, անցնում են նույնքան արագ, վոգքան և աչքիս առաջ յերևում ու չքանում են լեռները:

Ահա նա, Արոենիյը յերիտասարդ, աշխույժ, սլարդ հայացքով և դյուլթիչ ժպիտով, տասնինն տարի սրանից առաջ: Իվանովո-Վոդնեսենսկի ու Շույայի պրոլետարների կրակոտ մարտիկն ու առաջնորդը, վորին այդ պրոլետարների ավանդարդը-բողջե-վիկները ուղարկել են կուսակցության Ստոկհոլմի համադումարը:

Մենք միայն մի ամիս անց կացրինք Միխայիլ Վասիլյեվիչի հետ, բայց հիշողության մեջ մնաց ամբողջ կյանքիս ընթացքում:

Անցան պայքարի, բանտերի, տաժանքի 14 ծանր սարիներ և մենք նորից հանդիպեցինք 1920 թ. աշնանը:

Յ Հեծյալ բանակը արագացրած յերթով շարժւում ե լեհական ճակատից դեպի վրանդելյան ճակատը:

Նոր հրամանատար ընկ. Ֆրունզելից հրաման ե տացվում բանակի յերթը արագացնելու: Մեղտեմբերի վերջին նա կամ ինձ, կամ Բուդյոննու՛՛ կանչում ե խորհրդակցութեան Սարկով: Ընկ. Բուդյոննին բանակից կտրվել չի կարող և յես շտապ շոգեքարշով սլանում եմ դեպի Սարկով:

Գլխ. հրամանատարի վազոնը: Սեղանի մոտ նըստած ե դլխ. հրամանատարը: Շտաբի պետը և... այլ ո՞վ ե, Ֆրունզե՞ն ե: Աչքերիս չեմ հավատում: Բերկրալից հանդիպում: Արսենիյն ու Վոլոդյան, վորոնց հեղափոխութեանը «վերամկրտել ե» և իրենց սեփական անուններն ու ազգանուններն ե տվել: Սեղմում ենք իրար ձեռքեր: Յերկուսս ել հուզված ենք, ուրախ ենք, վոր անսպասելի կերպով իրար հանդիպեցինք:

Ահա թե ուրեմն ով ե Ֆրունզե-Միխայլովը, վորի մասին այնքան պանծալի, լեղենդների հասնող տեղեկութեաններ ու լուրեր կան: Ահա նա, Իվանովովո՛վոգնեսեսկի և Շուլյայի մանածագործ բոլշևիկների դաստիարակած սանը:

Սեղանի վրա մի հսկայական քարտեզ կա, վորի վրա յերևում ե, վոր ուսսական հեղափոխութեան թշնամին, վերջին թշնամին տասնապատկված լիտիութեամբ փորձում ե ընդլայնել իր գործողութեաններին ուսյոնը:

Մենք սկսում ենք քննել բարոն Վրանզելին վըճ-

ռական ու վերջին հարված հասցնելու ստրատեգիական պլանը:

Յե՛վ յերեկվա ընդհատակյա աշխատող, բոլշևիկ Արսենիյն իսկական զորավարի զարմանալի պարզութեամբ և ապշեցուցիչ հեյլնակութեամբ մանրամասնորեն զարգացնում ե Կարմիր բանակի մոտալուս վճռական ուղեբացիաները:

Աննչան գիտողութեաններ, մտքերի կարճ փոխանակութիւն և բոլշևիկ Արսենիյ-Ֆրունզելի պլանը, ուղեբատիվ պլանը հաստատված ե:

Վրանզելի բախտը կանխորոշված ե:

Մի ամիս հետո նորից հանդիպում Միխայլի Վասիլյեվիչի հետ: Հալից ընկած և քայքայված յերկաթուղային մի կայարան, փորը դեռ յերեկ վխտում եր խուճապահար փախած վրանդելականներով:

Մի փոքրիկ սենյակում, կիսախավարի մեջ հավաքվել են բոլոր բարձր հրամանատարները Միխայլի Վասիլյեվիչի գլխավորութեամբ: Թշնամին ջախջախված ե, բայց դեռ չի վոչնչացված:

Միխայլի Վասիլյեվիչը համբերութեամբ և ուշադրութեամբ լսում ե իր բոլոր մերձակա ղեկավարների կարծիքները և հենց տեղն ու տեղն ել վորոշումներ ե ընդունում հետագա գործողութեանների վերաբերյալ: Իսկ մի տասն ուր անց, մենք Միխայլի Վասիլյեվիչի հետ արդեն, ամտոոյով սլանում ենք ազատազրված կարմիր Ղրիմի տերիտորիայով: Յե՛վ ապա—ապա միատեղ յերկար աշխատանք, վորը մոտեցնում, հարազատ ե դարձնում:

Յե՛վ ահա նա չկա... Չկա լավագույններից լա-

վազուցնը... Չկա այլևս դորավար-առաջնորդը, չկա խոչորազույն բուլչեիկ-քաղաքադետը, դադարեց բարխել բյուրեղի նման մաքուր սիրտը:

Իսկ կյանքը իր հերթին առաջ է գնում:

Այն դործը, վորին ծառայեց և իր կյանքը նվիրեց անմոռանալի բարեկամը, առաջվա նման սահանջում է բոլոր ուժերի և կամքի լարումը: Կամքը մի ակնթարթ շյատյած է, իսկ ուժը: Վոչ, մեր ուժը տեղն է: Յեվ մենք հաստատում ենք՝ Միխայիլ Մասիլյեվիչի դործը համաշխարհային ամբողջ պրոլետարիատի դործն է և այն կհասցվի հաղթական վախճանին:

“ПРАВДА,

11 նոյեմբերի 1925 թ.

«Հոդվածներ յեվ ձառեր»  
Համ Կ(Բ)Կ ԿԿ-ի Կուսերաս, 1936

Մ. Վ. ՖՐՈՒՆԶԵՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԲԱՐԵԿԱՄՆ  
ՈՒ ԱՌԱՋՆՈՐԻՆ Ե

Մի տարի յե անցել անմոռանալի Միխայիլ Վասիլյեվիչի մահվանից հետո: Առաձն ասում է «ժամանակը լավագույն բուժիչն է»: Այո, Ֆրունզեյի հանկարծակի մահվամբ հասցրած կորուստի սրությունը, հոգեկան վերքերը պակաս զգալի յեն դառնում, թուլանում են: Այդպես է կյանքն իր որենքներով: Եայց Միխայիլ Վասիլյեվիչը պատկանում է այնպիսի մարդկանց շարքին, վորոնց կյանքը խոր, անջնջելի հետքեր է թողնում մարդկային պատմության անվերջ կերպով յերկար ժամանակաշրջանի համար:

Անցել է մի տարի այն որից, վոր այլևս չկա լավագույն կոմունիստներից մեկը, ապստամբած պրոլետարիատի ղինված ուժերի ամենից ավելի տաղանդավոր բնածին դորավարներից ու կազմակերպիչներից մեկը: Չնայած, վոր անմիջական կորուստի սրությունը անցել է, մենք, նրա բարեկամները և աշխատանքի ղինակիցները, ծանր, բայց շնորհակալ հեղափոխական աշխատանքի նրա ողնականները, դեռ մինչև այժմ չենք ուզում հավատալ, վոր այդ արտասովոր մարդը և այդ սիրալիր սրտակից ընկերը մեր շարքերում չէ: Բոլորն, ովքեր առիթ են ունեցել անմիջապես շիվեղու Միխայիլ Վասիլյեվիչի հետ,

սկսած կարմիր-բանակայինից, բանվորից ու դյու-  
դացուց և վերջացրած մեր կուսակցութեան ու խոր-  
հրդային պետութեան պատասխանատու աշխատող-  
ներով, նրա մասին պահպանում են ամենալավ,  
ամենալուսավոր հիշողութեանները: Յեւ այլ կերպ  
չի ել կարող լինել: Այս չափից դուրս հմայիչ, մեղմ,  
լարեսիրտ մարդը տառացիորեն դյութիչ տալս-  
վորութեան եր թողնում իր հետ չփնջ բոլոր  
մարդկանց վրա վոչ միայն դադարի ժամանակաշը-  
ջանում, այլ և ամենալարված, նույնիսկ հյուծիչ  
աշխատանքի ժամանակ:

Միխայիլ Վասիլյեվիչին յերբեք չեն մոռանա  
իվանովո - Վոդնեսենսկի բանվորները, վորոնց մնջ  
նա քաղաքականապես ածել է, ձևավորվել, առաջ է  
անցել պրոլետարիատի կուսակցութեան առաջին  
չարքերը և հետագայում դարձել է այդ կուսակցու-  
թեան լավագույն ղեկավարներից ու առաջնորդներից  
մեկը: Նրա լուսավոր դեմքը չի ջնջվի Մինսկի բան-  
վորների ու ղինվորների հիշողութեան մեջ, այն  
Մինսկի, վորտեղ Միխայիլ Վասիլյեվիչն առիթ է  
ունեցել աշխատելու 1917 թ. սկզբին, ցարական  
ռեժիմի վերջնական քայքայման և հեղափոխական  
չարժման ալիքի վերելքի ժամանակաշըջանում: Մի-  
խայիլ Վասիլյեվիչին վորպես իր հարազատ, մոտիկ  
բարեկամի ու առաջնորդի հիշում է պրոլետարական  
ու չքավորական ամբողջ Ուկրաինան, վորտեղ նա  
յեղել է զինված ուժերի վոչ միայն բարձրագույն  
գորավար ու կողմակերպիչ, այլև անփոփոխ ու  
մշտական խորհրդատու և ողնական այդ հանրապե-

տութեան խորհրդային ամբողջ շինարարութեան աս-  
պարիզում՝ քայքայման ծանր տարիներին: Միխայիլ  
Վասիլյեվիչը թանգ ու մոտիկ է նաև Մոսկվայի բո-  
լոր բանվորներին, վորոնք նրան տեսել են իրենց  
չարքերում 1917 թ. հոկտեմբերյան մարտերի ժամա-  
նակ և վորոնք բաղմիցս նրան լսել են հետագայում՝  
նրա հեա չփնջով դանաղան ժողովներում ու մի-  
տինդներում: Վերջապես խորհրդային պետութեան  
բոլոր աշխատավորները, մեր յերկրի սահմանից այն  
կողմը դոնովո բոլոր առաջավոր բանվորներն ու  
դյուդացիները կհարգեն Միխայիլ Վասիլյեվիչի հի-  
շատակը, վորպես աչքի ընկնող մարտիկի ու հեղա-  
փոխականի, վորը մինչև վերջը նվիրված է յեղել  
բանվոր դասակարգի ազատագրման գործին:

Միխայիլ Վասիլյեվիչ Ֆրոնդեն, նախքան մեր  
կուսակցութեան ղեկավարներից մեկը և Բանվորա-  
դյուդացիական կարմիր բանակի առաջնորդը դառ-  
նայն անցել է կյանքի դաժան, փշոտ ճանապարհ:  
Բանտեր, ձերբակալութեան ժամանակ դադանային  
ծեծ, ցարական դատարան, վորը յերկու անգամ մահ-  
վան դատավճիռ է արձակել նրա նկատմամբ, բան-  
տային կյանքի յերկար ամիսներ և մահապատժի  
ուկնկալութեան, տաժանք ու աքսոր, փախուստ և  
թափառումներ ուրիշ անվան տակ և ցարական  
ոպրիչնիկների կողմից ամեն մի բոպե բռնվելու  
ուխկ—այս բոլորը չկարողացան կտորել բուլեվիկ-լե-  
նինյանի յերկաթե կամքը, բուլեիկ, վորը գիտակ-  
ցաբար իրեն նվիրել է մարդկութեանը կապիտալիս-  
տական լծից ազատելու մեծ գործի ծառայութեանը:

Ընդհանգստակիւ, ծանր փորձութիւնները կոչուած են կրակոտ հեղափոխականի բնավորութիւնն ու կամքը :

Միխայիլ Վասիլևիչիչը պատմութեան մեջ մտել է վորպես Կարմիր բանակի ամենաակնաթոր դորավարներից ու առաջնորդներից մեկը : Նա ռազմական գործի մասնագետ չէր այս բառի սովորական իմաստով : Միխայիլ Վասիլևիչիչը դարձաւ պրոլետարական զինված ուժերի դորավար ու առաջնորդ, անցնելով ընդհատակյա աշխատող բոլշևիկի ծանր դպրոցը, վորը շատ բանում լրացրեց այս արտասովոր մարդու մասնադիտական ռազմական գիտելիքների բացերը : Կարող է հրաշք թվալ, վոր յերեկվա տաժանակիւրը, հալածված փախստականն ու աքսորաբնակը նախ դառնում է որինակելի ռազմական կազմակերպիչ Յարոսլավի ոկրուդային կոմիսարի պաշտոնում և սպայ գլխավորում է հակահեղափոխական ուժերի ջախջախման ամենապատասխանատու ուղերայիաները, ուժեր, վորոնք սպառնում էին դեռ չամբապնդված, դեռ չուժեղացած պրոլետարական պետութեանը :

Միխայիլ Վասիլևիչիչը ամենապահիւ և ամենամաքուր մարդն էր և արդեն այն հանդամանքը, վոր նա համձն առավ այնքան ծանր, պատասխանատու աշխատանք, կարող է վկայել այն խոր հավատը, վոր նա տածում էր թե՛ դեպի այն գործը, վորի լուծումը նա հանձն էր առել և թե՛ դեպի իր ուժերը, վորոնց միջոցով նա պետք է լուծեր այդքան դժվարին խնդիրները : Այս պատճառով դարմանալի չէ, վոր Միխայիլ Վասիլևիչիչի անմիջական ողնականը և մեր խոշորագույն ռազմական մասնաղետներից մեկը, վորը այդ ժամանակամիջոցում աշխատում էր Մի-

խայիլ Վասիլևիչիչի հետ միատեղ և նրա ղեկավարութեան տակ, նրա մասին դրած իր հիշողութիւնների մեջ ասում է. «Յերևի շատ քչերը դիտեն, վոր նա բանակի իր հրամանատարութեան առաջին իսկ որից, այսինքն նշանակում է այնպիսի կարգերայից սկսած, վորը ըստ հին ժամանակիւ, ըստ հին գնահատութեան, ձեռք եր բերվում նախկին մասնաղետների ռազմական կյանքի և ռազմական աշխատանքի վերջում, նա հասնելով այդ կարգերային, հենց առաջին իսկ որից սկսեց այն իրադործել բառիս լիակատար իմաստով փայլուն կերպով, բառիս լիակատար իմաստով ռազմական գիտութեան կանոններով, որենքներով, մի գիտութիւն, վորը նրան դուցե մասամբ տեսականորեն ծանոթ էր, բայց վորն իրագործելը նրան թույլ էր տալիս իր ռազմական հոտառութիւնը... Հետագա դեպքերը ցույց տվին, թե ինչ արժեք Բուդուրուսլանի հարվածը : Կոլչակի ամբողջ ճակատը միշուր-միշուր յեղավ և հետագայում Կոլչակի դեմ մղած պայքարն արդեն նշանակում էր քաղել Բուդուրուսլանի հաղթանակի դափնիները, առաջ խաղալ փոքր կամ մեծ ուժերով և հետապնդել վիրավոր ու հալածված գաղանին» :

Ահա թե ինչ խոսքերով է բնութագրում իր պետին այս ամենաակնաթոր ռազմական մասնաղետը, ցարական հին բանակի ղեներալ Ֆ. Ֆ. Նովիցկին, վորի գլխով շատ բան է անցել : Կարելի չէր մեծ քանակութեամբ քաղվածքներ բերել շատ կոմպետենտ մարդկանց ճառերից ու հոդվածներից, մարդիկ, վորոնք անմիջաբար գիտել են, թե Միխայիլ Վասի-



լիւրիւն ինչպէս զարմանալի, տաղանդավոր կերպով  
ճշկավարում եր Արևելյան ճակատի մարտական  
ուպերացիաները :

Նրա կողմից մտածված և ապա փայլուն կեր-  
պով անցկացված այն ուպերացիան, վորը Թուրքես-  
տանի կտրված և թշնամական շրջապատի մեջ  
խեղդվող փոքրիկ հեղափոխական բանակը միացրեց  
Արևելյան ճակատի հաղթանակի գործառնների հետ,  
միայն հաստատեց և վերջնականապէս ամրապնդեց  
Միխայիլ Վասիլևիչի վորպես հեղափոխական  
հաղթանակները իսկական գործավարի ու կազմա-  
կերպչի համբավը և փառքը :

Այդ պատճառով զարմանալի չէ, վոր այն ժամա-  
նակ, յերբ հարավային հակահեղափոխութեան վիթ-  
վածք բարոն Վրանդելը, վորը ամբացել եր Ղրիմի թե-  
րակղզում և յերազում եր Մոսկովայի դանդերի զոդան-  
ջը լսելու, իր թակարդից դուրս յեկավ և սկսեց հաջող  
ուպերացիաներ զարդացնել կարմիր գորգերի դեմ, մեր  
կուսակցութեան Կիւր Վլադիմիր Իլիչի գլխավորու-  
թեամբ հիշեց Մ. Վ. Պրոնզեյի մասին :

Մեր կուսակցութեանն ու խորհրդային կառավա-  
րութեանը Միխայիլ Վասիլևիչին հանձնարարում  
են Վրանդելի վերջին հակահեղափոխական, արեւ-  
մտա-յեմքողական խմբերիալիզմի հետ սերտ կապ-  
ված բանակի վերջնական ջախջախման ամենազօրա-  
բին ու ամենապատվավոր խնդիրը :

Մեր յերկրի, և վոչ միայն մեր յերկրի, այլ և  
ամբողջ աշխարհի աշխատավորները դիտեն, թե ինչպէս  
փայլուն կերպով Միխայիլ Վասիլևիչը գլուխ բե-

րեց այդ բարդ մարտական ուպերացիան : Չէ՞ վոր ըն-  
դունակ և յեռանդուն սպիտակ գործավար-բարոնին շըր-  
ջապատել էյին հին, ցարական Ռուսաստանի լավա-  
դուն ստրատեգներն ու գործավարները : Բարոն Վրան-  
դելն ու նրա ողնականները կիրառեցին ռազմական  
գիտութեան ու տեխնիկայի բոլոր նվաճումներն ու մի-  
ջոցները, վորպեսզի պահեն իրենց կողմից զբաղված  
Ղրիմը, բայց կարմիր ղինված ուժերը, վորոնց ղեկա-  
վարում եր Միխայիլ Վասիլևիչի փայլուն ռազմական  
հանճարը, ջախջախիչ հարվածներով ցաք ու ցրել ա-  
րին, ինչպէս խաղաթղթե տնտիներ, հակահեղափո-  
խական գորգերը և բարոն Վրանդելի ու նրա ղեկերալ-  
ների յերեկվա հուշակավոր մարտական փառքից մնա-  
ցին միայն խղճուկ հիշողութեաններ :

Միխայիլ Վասիլևիչը, այդ կրակոտ բոլշևիկը,  
Ռուսաստանի մեծ պրոլետարիատի իսկական ղավակն  
է : Ռազմական այն փայլուն հաջողութեանները, վոր  
ձեռք ե բերել կարմիր ղենքը, նրա գլուխը պտույտ  
չեն բերում. նա մնում է նույնպէսի հանգիստ, հա-  
մեստ մարդ, միայն իրեն հատուկ ժպիտով և յերե-  
կայի նման սլարդ ղեղեցիկ աչքերով : Նա մնում է իր  
մեծ կամուրջատական կուսակցութեան որինակելի ան-  
դամ, վորը պատրաստ է կատարել իրեն հանձնված  
ամեն մի աշխատանք և ամեն մի գործ, վորքան ել  
այն ղօրվար յինի : Կուսակցութեան կողմից նրան տըր-  
ված ամեն մի աշխատանք, անկախ նրա բնույթից ու  
ծավալից, և կուսակցական ամեն մի գործ, լինի այն  
մեծ թե վորք, նա կատարում եր ամբողջ յեռանդով  
ու խանդավառութեամբ, վորը իսկական կուսակցա-  
կանի հատկանիշն է :

Քաղաքացիական մեծ պատերազմն ավարտված է : Միխայիլ Վասիլևիչը կանգնում է Ուկրաինայում ու Ղրիմում տեղափոխված ղինված ուժերի դուրս : Աշխատանք և այն ել շատ ծանր աշխատանք ինչքան ուղես կա : Մենք աժեշտ է զորացրել, արձակել հարյուր ու հարյուր հազարավոր բանվորներ ու դյուզացիներ : Իսկ ինչպես այդ անենք, յերբ տրանսպորտը համարյա չի գործում, վառելիք բացակայում է, յերկաթճեղերը ձյունով ծածկված են, կարմիր դորամասերը կայադորներում կխամբել են, քաղցած, իսկ Ուկրաինայում բորենիների նման թավառում էլին Մախնոյի, Տյուտյունիկի և հակահեղափոխության անթիվ անհամար այլ շայկաներ, վորոնք քար ու քանդ ելին անում յերկրի առանց այն ել քայքայված տնտեսությունը և վեժեցնում էլին խորհրդային շինարարությունը :

Միխայիլ Վասիլևիչն այս դժվարություններից չխախեցավ : Իրեն հատուկ ուսոնասրտություն մը և դեպի ինքն ու գործը տածած հավատով նա մյուս ընկերների հետ միասին սկսում է բանակի զորացրման, խորհրդային իշխանությունն ամրապնդելու, խորհրդային որինականությունն ամրացնելու, տնտեսությունը վերականգնելու հսկայական աշխատանք և կարճ ժամանակում շատ զգալի արդյունք է ձեռք բերում : Միաժամանակ նա սկսում է պլանաչափ, Ծրունդեավարի մտածված աշխատանք Խորհրդային Ուկրաինայում հսկայական չափերի հասած և մեծագույն դժբախտություն զարձած բանդիտիզմը վերացնելու համար : Ինչպես սմեն բանում, այնպես էլ բանդիտիզմի դեմ մղած պայքարում, ընկ. Ծրունդեն չեր բավականանում մի-

այն պլաններ ու ընդհանուր դիրեկտիվներ մշակելով : Նա ինքն անձամբ մեկնում է բանդիտիզմով ամենից ավելի վարակված վայրերը և անմիջաբար ղեկավարում է բանդիտիզմի դեմ մղած պայքարը : Մի անգամ Պոլտավչչինայում նրան վիճակվում է ընդհարվել մախնոյան բանդիտների հետ և միայն շնորհիվ իր զարմանալի ստունասրտության և իսկական, անաղմուկ քաջության ու հնարադիտության նրան հաջողվում է խուսափել անխուսափելի կորստից : Բազմաթիվ տեղերում գնդակով ծակված շինելն ու գլխարկը և վերափոխված ձին վկայում էլին այն դրուժյան լրջությունը, վորի մեջ ընկել էր Միխայիլ Վասիլևիչը :

Խորհրդային Ուկրաինան արժանի կերպով դնահաստեց այդ պահանավոր մարդու տաղանդը : Միխայիլ Վասիլևիչն իր անձի մեջ միացնում էր միաժամանակ Ուկրաինայի ու Ղրիմի զորքերի հրամանատարին և Ուկրաինայի Ժողկոմխորհի նախագահի տեղակալին, ընդվորում քաղաքացիական աշխատանքին նաքիչ ուժ ու ժամանակ չնվիրեց : Միխայիլ Վասիլևիչի վորպես Խորհրդային ուկրաինական կառավարության ներկայացուցչի կատարած ուղևորությունը դեպի Քեմալ փաշայի՝ իմպերիալիզմի դեմ պայքարող Թյուրքիան մի ավելորդ անգամ վկայում է, թե ուկրաինական ընկերների ինչ հսկայական վստահությունն էր վայելում մեր անմոռանալի բարեկամ Միխայիլ Վասիլևիչը : Քեմալ-փաշան և նոր Թյուրքիայի մյուս գործիչները մեծ հարգանքով էլին արտահայտվում Միխայիլ Վասիլևիչի մասին, նրան համարելով Խորհրդային պետության խոշոր ուղեմական ու հասարակական գործիչ :

Վերջապես կուսակցութունն 1924 թ. սկզբին Մի-  
խայել Վասիլյեվիչին նշանակում է ՍՍՀՄ-ի Հեղ.  
Ռազմ. խորհրդի նախագահի տեղակալի պատասխանա-  
տու պաշտոնին: Այդ նշանակումը արդյունք էր այն  
խոշոր թերությունների, վոր հայտնաբերվել էին ղին-  
ված ուժերի դրության ու կառուցվածքի բնարավա-  
ռում: Միխայել Վասիլյեվիչը ձեռնարկում է կարմիր  
բանակի վերակազմության չափողանց ծանր ու չափա-  
զանց անհրաժեշտ աշխատանքին: Հետևելով իր մշտա-  
կան պլանին («նախ ծանոթացիր, ուսումնասիրիր և  
ապա գործիր»), նա այս մեծ աշխատանքում ևս ծա-  
նոթանում է ավյալներին, նրանց ուսումնասիրում է,  
և ապա նշում է մշակում է կարմիր բանակի ինչպես  
կենտրոնական ու տեղական ապարատների, այնպես էլ  
ԲԳԿԻ մի շարք այլ բնագավառների վերակազմության  
մանրամասն պլանը:

Այս աշխատանքը տևում է ամբողջ 1924 թիվը:  
Վերակազմությունը հաջողությամբ ավարտվում է և  
այդ վերակազմության արդյունքն անհապաղ արտա-  
հայտվում է կառավարման որդանների աշխատանքը  
սովելի ճիշտ ղառնալով, ռազմական որդանիզմի գա-  
նադան մասերի փոխադրեցության հստակությամբ և  
կարմիր բանակի մարտունակության ընդհանուր աճ-  
մամբ: Սրա հետ միասին Միխայել Վասիլյեվիչը վո-  
րոշակի և ամուր կերպով ղնում է տերիտորիալ շի-  
նարարության հետագա ծավալման ու ամրապնդման  
հարցը: Միխայել Վասիլյեվիչին իր ձեռնարկումների  
մեջ վոչինչ չէր կարող չեզել նրա կողմից մի անդամ  
չլված և մտածված ուղիից— վոչ կասկածող բարե-

կամների կեղծ ժպիտները, վոչ թշնամիների չարա-  
նենդ Փշչոցը, թշնամիներ, վորոնք տերիտորիալ շինա-  
լարությունը համարում էին ղինված ուժերի լիկվի-  
զացիա, վոչ հրամանատարական ու քաղաքական  
կազմի թույլ հարմարվածությունը կարմիր զորամա-  
սեր ստեղծելու այս նոր, դեռ գործով չստուգված մե-  
թոդին: Միխայել Վասիլյեվիչն այս բոլորն արհամար-  
հում էր, հաստատ հետևելով նշված ուղիին: Այս աշ-  
խատանքի ասպարեղում ևս, ինչպես և այն ամենի  
մեջ, ինչ նա կատարում էր, նա հակայական ար-  
դյունք ձևը բերեց: Այժմ մենք կարող ենք ասել, վոր  
տերիտորիալ շինարարության գործում ևս նա բա-  
շարձակապես իրավացի յեր: Մեր տերիտորիալ զորա-  
մասերն աճել և դարձել են հզոր կազմակերպված ուժ,  
վորոնք վոչնչով հեռ չեն մնում մեր բանակի կադրա-  
յին զորամասերից:

1925 թ. հունվարին Միխայել Վասիլյեվիչը նշա-  
նակվում է ռազմական և ծովային գործերի ժողո-  
վրդական կոմիսար և ՍՍՀ Միության Հեղ. Ռազմ.  
խորհրդի նախագահ: Այս ամենապատասխանատու  
պոստում Միխայել Վասիլյեվիչը շարունակում է իր  
հեռանդուն աշխատանքը ռազմական ղերատեսչության  
վերակազմված ադարատների ամրապնդման, նրանց  
աշխատանքի վորակի բարելավման, ինչպես և թե՛  
բանակի, թե՛ ամբողջ պետության մարտունակությու-  
նը բարձրացնելու ասպարեղում: Այստեղ տեղը չե  
թվելու հարցերի այն հակայական մասսան, վոր ընկ.  
Ֆրունզեն բարձրացրել և դրել է կուսակցության ու  
կառավարության առաջ, հարցեր, վորոնց մի մասը նա

ՄԻՆԱՅԻՆ, ՎԱՍԻՆՅԵՎԻՉ ԳՐՈՒՆՁԵ

(Կենսագրական ակնարկ)

Մենք, կոմունիստներու, հատուկ խանութները մարդիկ ենք: Մենք հատուկ նյութից ենք ձեռք բերած: Մենք նրանք ենք, վորոնք պրոլետարական մեծ ստրատեգի բանակը, ընկեր Լենինի բանակն ենք կազմում: Չկա ավելի բարձր բան, քան այդ բանակին պատկանելու պատիվը: Չկա ավելի բարձր բան, քան կուսակցութեան անդամի կոչումը, վորի հիմնադիրն ու ղեկավարն ընկեր Լենինն է: Ասենք մեկին վրձակված չի այդպիսի կուսակցութեան անդամութեան հետ կապված արհաւիրքներին ու փոթորիկներին դիմանալ: Բանվոր դասակարգի զավակները, կարիքի ու պայքարի զավակները, աներեւակայի զրկանքները ու հերոսական ջանքերի զավակները—ա՜հ թե ովքեր ամենից առաջ պետք է լինեն այդպիսի կուսակցութեան անդամները:

ԱՍՍԱԿԻՆ

ՄԱՅԻՆ ՈՒ ՀԱՅՐԸ

Անցյալ դարի 70-ական թվականներին Վորոնեժի նահանգի պետական Տանցիքի դուղը հող վորոնելու հետևից ընկած դարեր շարունակ նստած տեղից վեր կացավ և արշավեց դեպի Միջին Ասիա: Գյուղը հասավ Սեմիրյեչյե և այնտեղ նստեց:

Այդ արշավին մասնակցում էր դեռ տաս տարե-

Կենին—Մտալին, Մինատորյակ, էջ 20, հրատ. 1937 թ.

անց և կացրել ինքն անձամբ, խոլ մյուս մասը կենսադրժմում և այժմ ազգական դերատեսչութեան կողմից: Պետք է միայն ասել, վոր այն հսկայական ինքնակրեքը, վորը դնում էր լուծման համար այդ արտասովոր մարդը, նոր ժամանակաշրջան են բացել ազգական շինարարութեան ասպարեզում: Նրա ապանդները մեզ, նրա ընկերների համար, մինչև այժմ էլ անսասան են մնում և անց են կացվելու հողուտ բանվորա-դուղացիական կարմիր բանակի ու մեր կորհրդային պետութեան:

Միևայլ Վասիլյեվիչի կողմից մեր պետութեան պինված ուժերի զարգացման ճանապարհին դրած նշանաձողերը մեզ առաջիկայում ևս պիտի ծառայեն պորպես ցուցում, թե ինչ ուղղութեամբ պետք է դնալ, պորպեսզի հասնենք այն նպատակներին, վորոնք մեզ համար թանկ են, վորոնց ծառայել է, վորոնց նվիրել է այն ամենը ինչ վոր իր կյանքում լավագոյնն է յեղել և հենց իր կյանքը Մ. Վ. Ֆրունզեն:

Մեր բարեկամի, կարմիր բանակի առաջնորդի և ամրակուտ բոլշևիկ-լենինյանի համար արժանի արձան կլինի մեր մշտական, անդուլ աշխատանքը կարմիր բանակի մարտական հզորութեանը ամրապնդելու ասպարեզում— այն կարմիր բանակի, վորը պրոլետարական պետութեան խաղաղ աշխատանքի պատվարն է:

„Правда“

31 հոկտեմբերի 1926 թ.

կան աղջիկ Մարիա Յեֆիմովնա Բոչկարյովան— Մի-  
խայիլ Ֆրունզեյի մայրը :

Ֆրունզեյի հայրն էր դավաճամասային Ֆելլեշեր  
Վասիլի Միխայլովիչ Ֆրունզեն, վորը ռուսացած  
մորթավ էր : Նա Խերսոնի նահանգի Տերասպոլի  
դավաճի դյուղացի յեր, բայց վորպես Ֆելլեշեր ռազ-  
ժական ծառայությունը կրում էր Թուրքեստանում և  
այդպես էլ մնաց Սեմիրեչյեյում :

Միխայիլ Ֆրունզեն ծնվել է 1885 թ. հունվարի  
21-ին (հին տոմարով) Պիշպեկ քաղաքում :

#### ՎԻՃԱԿԸ ԶԳՎԱԾ Ե, ՌՈՒԻԻԿՈՆՆ ԱՆՑԱԾ

Հայրը մեռավ այն ժամանակ, յերբ Միխայիլ  
Վասիլևիչիչը ընդամենը 13 տարեկան էր : Ընտանիքի  
հոգան ընկնում է փոքրահասակ յեղբայրների ուսին,  
վորոնցից մեծն և Կոնստանտինը և փոքրը՝ Միխայիլը :  
Նրանք սովորում էին դիմնադիպում, իսկ կողմնակի  
կերպով վաստակում էին նրանով, վոր դասեր էին  
տալիս ունեւոր ընտանիքների յերեխաներին :

Ապրում էին կիսաքաղց վիճակում : Ամեն ինչից  
անտեսում էին, սապոնից, թելից, լուցկուց—միայն  
թե սովորեն : Հաճախ ճրագլի մոմ առնելու վող իսկ  
չէր լինում և նրանք պարսպում էին միաճրագի  
յուշով :

Սկսվեց ռուս-ճապոնական պատերազմը, վորը  
ժողովրդի համար քայքայիչ և ցարի համար անհա-  
ջող դուրս յեկավ : Ինքնակրթության դիմնադիական  
այն խմբակներում, վորոնց հետ չվիում էր յերթա-

սարգ Ֆրունզեն, քանի դնում այնքան ավելի հաճախ  
էին հնչում հեղափոխական խոսակցությունները :

Ֆրունզեն, վորը զգայուն էր դեպի ամեն մի ա-  
նարդարություն և մի փոքր խանդավառ, բայց նաղա-  
տակին հասնելու տեսակետից համաս, հանդես էր  
դալիս վորպես աշակերտական բոլոր բողոքների պա-  
րագլուխ և հանդես էր դալիս բացահայտ կերպով :  
Դպրոցի վարչությունն արդեն ծուռ էր նայում նրան :  
Իայց 1904 թ. վարնանը նա փայլուն կերպով տվեց  
ավարտական քննությունները, ստացավ վոսկե մեդալ  
և մեկնեց Պետերբուրգի Պոլիտեխնիկական ինստի-  
տուտը :

Յերկար ժամանակ նրանից տեղեկություն չկար :  
Կոնստանտին յեղբորը վերցրել էին պատերազմի և  
նա նույնպես անհետ կորել էր : Մորը սկսեցին յու-  
րեր հասնել Պետերբուրգի «Արյունոտ կիրակի»-ի մա-  
սին : Յեվ հանկարծ Միխայիլից նամակ է ստացվում .

«Վիճակը ձգված է, Ռուբիկոնն անցած : Դու ու-  
նես Կոստյա անունով վորդի, վորը քեզ չի թողնի,  
իսկ յես...»

Նա նամակով չէր կարող հայտնել, վոր վոստի-  
կանության հետ ունեցած ընդհարման ժամանակ  
ձեռքից թեթև վերավորվել է, ձերբակալվել, ազատ-  
վել էր հանցանշանների պակասության պատճառով  
և աքսորվել Պետերբուրգից :

#### ԸՆԿԵՐ ԱՐՍԵՆԻՅԸ

1905 թվի մայիսի սկզբին Իվանովո-Վոզնեսենսկի  
ուսյոնի բանվորական խմբակներում յերևան է դալիս

կարճահասակ մի պատանի, լիք-յերես, փափուկ մազերը ցից-ցից սանրած, ամաչկոտ առնական ժպիտը դեմքին, պարզ ու հաստատ հայացքով — ընկեր Արսենիյը:

Նրա մեջ ցուցադրովի «հեղափոխականի» հետք անգամ չկա: Կենցաղում, հաղուստով նրան շարքային բանվորից տարբերել չես կարող: Ընդհատակյա աշխատանքի պայմանները, ուր ել վոր նրան շարտեյին — բանվորական կազարման, դյուղացիական խրճիթը, ամեն տեղ նա իր մարդն է, այն է՝ ինչպես ամենքը, քնում է հատակին, ընդհանուր ամանից ուտում է թթու շշի և կաշա:

Բայց հենց առաջին դատեմարտում ամաչկոտ ժպիտով պտտանին հանդես է բերում մարտիկի բողալառ խառնվածք և կազմակերպչի յերկաթե ձեռք:

Մայիսի կեսերին բարձրացավ 60 հազար մանածաղործների դործադուլը, վորը խուճապային յերկյուղ պատճառեց տեղական բուրժուազիային ու վոստիկանությանը: Գործադուլի գլուխն անցավ ընկեր Արսենիյը: Շուկայի հին բանվորները մինչև այժմ հիշում են Տաղա դետի աիին նավակներից ու գերաններից կառուցված տախտակամածի վրայից արտասանած նրա ճառերը:

Զորքերն ու վոստիկանությունը առաջին դործադուլը արյան մեջ խեղդեցին: Բայց ամառվա ընթացքում Արսենիյը (նույն ինքը նաև Տրիֆոնիչ) ընկերների հետ միասին ստեղծեցին բոլշևիկների ոկրուզային կազմակերպություն, տարածեցին իրենց աղղեցու-

թյունը դյուղի վրա և դործը նորից դնաց դեպի վերելք:

1905-ից մինչև 1907 թիվը նա սարսափի մեջ էր պահում Շուկայի իշխանությունները: Նրա մի կոչով էանդ էյին առնում Փարբիկաներն ու դործարանները: Այն ժողովները, վորտեղ նա հանդես էր գալիս, պաղտի կերպով գալիս էյին զինվորները: Ժամանակ է յեղել, յերբ իշխանությունը հրաման է տվել՝ Արսենիյը յերեալիս զինվորներին փակել դորանոցներում: Մի անգամ տեղական դորախումբը հանեցին նրան ձերբակալելու, բայց զինվորները միացան ամբոխին:

Այսպես ահա նա հիմք դրեց Իվանովո-Վոլոնեսենսկի մանածաղործների հետ ունեցած մեծ, անխախտ բարեկամությանը:

Իսկ ի՞նչը վերածեց դեռ յերիտասարդ հեղափոխական Արսենիյին Իվանովո-Վոլոնեսենսկի բանվորների առաջնորդի: Նա անցել էր Պետերբուրգի խմբակների և Պիտերի բանվորների մասսայական պայքարի դպրոցը: Յեվ նա խոր կերպով յուրացրել էր Ռուսաստանի բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը պլերեալարի լուծելու լենինյան ծրագիրը: Բանվորների ընդհանուր դործադուլի և զինված ապստամբության կազմակերպումը: Գյուղացիական հեղափոխական շարժմանը ցույց տված աջակցությունն ու այդ շարժման պարզացումը: Ինքնակալության տապալումը և բանվորների ու գյուղացիների հեղափոխական-դեմոկրատական զիկտատուրայի համար մղվող պայքարը: Ընդդեմ մենչևիկյան պոչականության բուրժուազիայի նկատմամբ, վորը

գործարք է կնքում ցարի հետ: Ընդդեմ Տրոցկու «ձախ» ավանտյուրիզմի, Տրոցկու, վորը իրար դեմ էր դուրս բերում բանվորների ու դյուղացիների շահերը, վորպես իրար թշնամի շահեր, ի շահ բուրժուազլայի:

Մի խոսքով նա լենինյան-ստալինյան խառնվածքի հեղափոխական էր: Յեվ արտասովոր մարդ լինելով, նա դարձավ Իվանովո-Վոլեսենսկի բանվորների առաջնորդ:

Հետագայում այս բանվորները Ֆրունզեյի առաջնորդութամբ կռվում էին Չավոլժյեյում և Ուֆայի մոտ, Որենբուրգի մոտ և Ուերալում, Կասպիի մոտ և Գրիմում: Գծվարին սովի տարիներին ևս նա շատ անդամներ այցելում էր նրանց, ման էր դալիս բանվորների բնակարանները և հարց ու փորձ էր անում նրանց կարիքների մասին:

#### ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԴՊՐՈՅԸ

Ֆրունզեն միշտ մեծ ուշադրութամբ էր վերաբերվում կուսակցութայն անմիջական մարտական աշխատանքին: Նա մարտական զրուժիանների առաջին և լավագույն կազմակերպիչներից մեկն էր և բաղմիցըս մասնակցել է դորքերի ու վոստիկանութայն հետ սենեցած մասսայական ու առանձին ընդհարումներին: 1905 թ. Շուլայի մի խումբ պրոլետարների հետ միասին նա կռվում էր Մոսկվայի բարիկադների վրա: Նա որը ցերեկով մարտական զրուժիանայի գլուխ անցած Շուլայում դրավեց Լիմոնովի տպարանը և յերկու-յերեք ժամվա ընթացքում բաց թողեց մի քանի հազար բուլչեիկյան թուղցիկներ:

Շատ անդամներ նա ծեծվել է: Մի անգամ յեղևնուտում նրան բռնում են կազակները: Նրան ծեծում են, վզին թոկ են դցում և քշում են ձիու հետևից:

«Յես վաղում եմ, — հետագայում պատմում էր նա, — և յերկու ձեռքով բռնում եմ թոկի հանգույցը, վոր չխեղդվեմ: Վաղում եմ, իհարկե ձիու հետևից շեմ հասնում... Կազակները վրաս բղավում են, մայր են հայհոյում, յես սայթաքում եմ: Հասնում ենք մի ինչ վոր պարտեղի ցանկապատի և առաջարկում են վեր կենայ և կանգնել ցանկապատի վրա: Յես կարծեցի, թե ինձ առաջարկում են ձի նստել: Հենց վոր յես բարձրացա ցանկապատի վրա, կազակը ձիուն մտրակեց: Վոտներս ցցապատանեչի մեջ մնացին և յես չկարողացա վոտներս ապատել մինչև վոր ցցապատանեչը կտորվեց: Յես ուշքս կորցրի և ընկա...»

Ամբողջ կյանքում նա մի փոքր կաղում էր: Յերկար քայլելու ժամանակ, որինակ սարերում, ուժեղ վոստյունների և անհաջող շրջադարձի ժամանակ յերբեմն նրա ծնկոսկըրը տեղից դուրս էր սողում և նա աննկատելի կերպով իր պինդ ձեռներով հենց դնալիս ծնկոսկըրը տեղն էր դցում:

Նա, այս ել արդեն քանիերորդ անգամը, ձերբակալվեց 1907 թ. մարտի 24-ին: Նա յերկու մասուլեր ունեւր: Նա կենդանի չէր հանձնվի, բայց այն տանը, վորտեղ նա թաղնվում էր, փոքր յերեխաներ կային և նա նրանց խղճաց:

#### ՇՂՌԱՅԱԿԱՊ ՎԵՃԱԿՈՒՄ

Նրա գործը յերկար էր ըննվում: Միայն 1909 թ.

հունվարի 26-ին տեղի ունեցավ նրա առաջին դատը: Նրան դատապարտեցին մահվան կախաղանի միջոցով ուրյադնիկ Պերլովի «կյանքի դեմ մահափորձ կատարելու» համար: Գործը այնքան «ապօրինի» յեր սարվում, վոր հաջողվեց այն բեկանել տալ: Ազատելով դատարանի վճիռը հաստատելուն կամ փոխելուն, «մահապարտ» Ֆրունզեն պահանջեց զրբերի հերթական մի կապոց, վորոնց մեջ անդերեն լեզվի դասադիրքը, Սոդսկու «Քաղաքատնտեսութուն Ֆրանսաների հետ կապված» և Պետրաժիցկու «Իրավունքի և բարոյականության ուսումնասիրության ներածութուն» զրբերը: Յերկու և կես ամսից հետո տեղեկութուն ստացվեց, վոր դործը պիտի վերանայվի: Յեվ այս ամբողջ ժամանակամիջոցում, նա չդադարելով սովորելուց, ապրում եր սպասելով, վոր իրեն ամեն մի բոպե կարող են կախել:

1910 թ. փետրվարի 10-ին նրան դատում են այլ մեղադրանքով, վոր նա պատկանում է ՌՄԳԲԿ-ին: Ինչպես և առաջին դատի ժամանակ նա ավելի հող է տանում ուրիշների ճակատադրի մասին և հանդիսատե կայուն կերպով կրում է կազմակերպության պատկանելու պատիվը: Նրան դատապարտում են չորս տարվա տաժանքի: Իսկ նույն թվի սեպտեմբերի 22-ին նորից դատում են հին մեղադրանքով, վոր նա մահափորձ է կատարել ուրյադնիկ Պերլովի կյանքի դեմ: Յեվ նորից մահվան դատավճիռ, վորը մի փոքր հետո փոխում են վեց տարվա տաժանքի լրումն նախկին չորս տարվա:

Ֆրունզեն ավելի քան յոթ տարի անց է կացրել

տաժանակիր բանտերում՝ Վլադիմիրի, Նիկոլաևի, Ալեքսանդրովսկի և մի տարի Վերխուլենսկի աքսորում:

Նրա հանդիստ և արի հայացքի առջևից անցել են ուսակցիայի ժամանակաշրջանը—«վայ հեղափոխականների» հեռանալը հեղափոխությունից, լիվիդատությունը, Հուդա-Տրոյկու ստոր կրկնակի խաղը: Յեվ ապա հեղափոխական արիքի նոր վերելքը 1911-1912 թվերին, բուլչեիկյան կուսակցության աճումն ու ամբացումը և նորից այդ արիքի տեղատվությունը լուսերիախոտական սպանող սկովելու կապակցությամբ և մենչևիկների նոր դավաճանությունը:

Այս ետապներից և վոչ մեկի ժամանակ Ֆրունզեն սատանումներ չի խմացել և մինչև վերջը հավատարիմ է մնացել Լենինի-Ստալինի դրոշին:

Աքսորաբնակության դուրս գալուց հետո նա բանտարկվում է աքսորականների միջև կազմակերպություն ստեղծելու պատճառով: Վորոչ ժամանակ անց նա փախչում է Ջիտա, վորտեղ կազմակերպում է բուլչեիկյան ուղղության պատկանող լրագիր և նորից հայտարերվում է և նորից փախչում և նորից յերևանում, վորպես Ջեմսովային Միության աշխատող: Ե գալիս Միխայլովի ազգանունով Արևմտյան ճակատ

ԲՈՂՇԵՎԻԿՅԱՆ ԶՈՐԱՎԱՐԻ ԾՆՈՒՆԴԸ

1917 թվի փետրվարի մոտերքը Ջեմսովային Միության աշխատող «Միխայլովը» ստեղծում է ընդհատակյա հեղափոխական մեծ կազմակերպություն, վորի կենտրոնը գտնվում եր Մինսկում և բաժանմունք-



ները 10-րդ և 3-րդ բանակներում: Կաղմակերպու-  
թյունը բացվել էր, բայց արդեն ուշ էր— սկսվել էր  
փեարվարյան հեղափոխութիւնը:

1925 թ. անգլիական « the Aeroplane » ամսա-  
թերթում գեաեղվել էր իմբազրական մի հոդված  
« Ռուսական նոր առաջնորդը » վերնագրով, վորը  
նվիրված էր Ֆրունզեյին, վորպես ռաղմական ղեկա-  
վարի: Վորպես կուբյոզ մենք կրերենք նաև այն բա-  
վական յուրատեսակ պատճառարանութիւնը, վորով  
հոդվածի հեղինակը ամրապնդում է Ֆրունզեյի ռաղ-  
մական հատկութիւնների ընդհանրապես բարձր գնա-  
հատականը:

«... Ֆրունզեյի կարգերան իր վրա ուշադրութիւն  
է դրաւում, — գրում էր հոդվածի հեղինակը: Նախ  
պեաքենչել նրա ուումինական ծագումը: Ռուսիններն  
այժմ մարտական մեծ աղգ չեն հանդիսանում, ինչ-  
պես այդ սպացուցվեց 1914—1918 թվականներին:  
Բայց... ուումինները պարծենում են, վոր իրենք ծա-  
ւում են հոմեական այն գաղութից, վորը հին ժա-  
մանակները հանդիսանում էր Հոովմեական կայսրու-  
թյան առաջավոր պոստը ընդդեմ սկյութական հրո-  
սախմբերի: Ուստի հնարավոր է, վոր ուումինները ի  
վիճակի յեն այժմ ևս տալ ռաղմական մեծ հան-  
ւար...»

« Մյուս կողմից, — շարունակում է հոդվածի հե-  
ղինակը, — Ֆրունզեյի մայրը Վորոնեժի շրջանի մի  
գեղջկուհի յե յեղել: Ներկայումս Վորոնեժը մի քա-  
ղաք է, վորը անուն է տալիս մի մարդի, վորը սահ-  
մանակից է Հարավային Ռուսաստանի Դոնի կաղակ-

ների տերիտորիային, ուստի լիակատար հնարաւո-  
րութիւն կա յենթադրելու, վոր այդ գեղջկուհու  
յերակներում հասել է կաղակի արյուն, սսել է, թե  
նա ունեցել է մարտական հատկութիւններ: Հոովմե-  
ական հեռավոր նախնիների միավորումը կաղակի ա-  
րյան հեա շատ հեշտությամբ կարող է հանճար  
ստեղծել »:

« Մենք տեսնում ենք, թե նա ինչպես 34 տարեկան  
հասակում ջախջախում է աղմիրալ Կոլչակին, վորն  
ինքը շատ կոմպետենտ մարտական անձ է յեղել: Գե-  
ներալ Վրանզեյին ջախջախելը, այն Վրանզեյին, վո-  
րը ողտւում էր բրիտանական ու Ֆրանսիական շտա-  
բի սպաների աջակցությամբ և այս պետութիւնների  
նյութական մատով, ինչպես և անգլիական ողային  
աժեբի մի քանի ջոկատներով, վորոնց դեմ Ֆրունզեյն  
ողում վոչինչ չեր կարող հակադրել, ցույց է տալիս,  
վոր նա համենայն դեպս միանգամայն կոմպետենտ  
մարդ է »:

Այնուհետև հոդվածի հեղինակը հանճնարարում է  
« ձեռք բերել ամեն տեսակ ինֆորմացիա այդ մարդու  
անճնավորութիւն մասին և յեռանդուն կերպով ու-  
ւումնատիրել ռուսական այդ նոր առաջնորդի ոպերա-  
ցիաները »:

Հարգո հեղինակը, ինչպես տեսնում ենք, Ֆրուն-  
զեյից վախենում էր: Սակայն նա շատ թույլ էր հաս-  
կանում, վոր Ֆրունզեյն բոլորովին նոր տիպի զորա-  
վար է: Մի զորավար, վորի ռաղմական ստրատեղիան  
յեղում է բանվոր դասակարդի քաղաքական խնդիր-  
ներից, մի զորավար, վորը մասսաների քաղաքական

Վարձակերպիչն է, մի զորավոր, վերը նվաճող չէ, ալլ աշխատավոր մարդկանց և ճնշված ժողովուրդների ազատարարը: Կարճ ասած՝ բոլշևիկյան զորավար:

Ֆրունզեն հասունացավ վորպես խոշոր քաղաքական ու ոսպմական ղեկավար Հոկտեմբերյան զրոհի նախապատրաստման շրջանում և Հոկտեմբերյան հաղթանակն ամրապնդելու առաջին տարվա ընթացքում:

Ֆրունզեն պայքարի կոնկրետ ճակատամասերում ուսանց ազմուկի, միշտ մասնաների հետ միասին և նրանց գլուխն անցած, հետևողական կերպով իրադրոժում երսոցիայիստական հեղաշրջման այն մեծ ծրարիբը, վերը դժեւ եր Լենինը ապրիլյան թեղիսներում և իր այն ժամանակվա հանձարեղ հողվածներում և կուսակցութեան Վ համազումարի վորոշումներում, մի համազումար, վորտեղ Ստալինը պաշտպանեց և անց կացրեց լենինյան զիծը: Յեւ միշտ Ֆրունզե-քաղաքաղետի հետ անփոփոխ ընթանում է Ֆրունզե-չինվորականը:

Ֆրունզեն փետրվարից հետո Բելոռուսիայի հեղափոխական շարժման առաջնորդներից մեկն է, նա Բելոռուսիայի գյուղացիական ղեկուտատների իր ստեղծած խորհրդի ղեկավարն է: Նա միևնույն ժամանակ քաղաքացիական միլիցիայի պետն էր, յերբ հարկավոր եր զինաթափ անեյցարական վոստիկանութեանն ու ժանդարմներին. նա աշխատում է զինվորների միջև ճակատային կոմիտեյում և կորնիլովյան հարձակման ժամանակ նրան ընտրում են Մինսկի ոսյոնի հեղափոխական զորքերի շտաբի պետ:

Հոկտեմբերից առաջ հարազատ Շույայում նա

գլխավորում է բանվորական, դյուլացիական ու զինվորական ղեկուտատների խորհուրդը, նրան ընտրում են Գաղաքային Դումայի և Ձեմսովային ուղքավայի նախագահ, նա իրադրոժում է հոկտեմբերյան անարյուն հեղաշրջումը հարազատ քաղաքում: Բայց նա հենց ինքն էլ կարձակերպում է բանվորների ու զինվորների յերկու հազարանոց ջոկատ Հոկտեմբերյան որերին Մասկվայի բանվորներին ոգնութեան հասնելու համար և զենքը ձեռքին մասնակցում է յունկերների դեմ ուղղված փողոցային կռիվներին Մեծ թատրոնի ու «Մետրոպոլի» մոտ:

Հեղաշրջումից հետո Միխայիլ Վասիլյեվիչը կուսակցութեան նահանգական կոմիտեյի, նահ. զործկոմի և նահ. ժողտնտխորհի նախագահն է: Վորպես նահանգական ոսպմական կոմիտար նա կազմում է հանրապետութեան առաջին զինված ջոկատները:

«Ճողովի նախագահ ընտրվում է Ֆրունզեն, — նրա կյանքի այս շրջանի մասին գրում է Ֆուրմանովը իր «ПУТЬ К БОЛЬШЕВИЗМУ» գրքում: — Նա զորմանայի մարդ է: Յես ղեպի նա խորը համակրանք եմ պածում: Մեծ խելքը նրա մեջ զուգորդվում է հայացքի, շարժումների, առանձին հարցերի մանկական միամտութեան հետ: Հայացքը միշտ խելացի յե. նույն իսկ ժպտալիս ուրախութեյում սովերում է խելքով: Բոլոր խոսքերը հասարակ են, ճշգրիտ և պարզ. ճառերը կարճ են, հարկավոր և բովանդակալից. մտքերը՝ հասկանալի յեն, խորը և մտածված, վորոշումները համարձակ և ուժեղ, ապացույցները՝ համոզիչ և հաստատուն: Նրա հետ մարդ իրեն թեթև է զղում:

Յերբ Պրուսիան նախագահական սեղանի մոտ է,—  
ուրեմն վորեւ մեծ և լավ բան կարվի»:

Յարտարայլի սպիտակ-զվարդիական խոսվություն-  
նից հետո 1918 թ. Պրուսիան նշանակվում է Յարտար-  
այլի սկզբից ազգական կոմիտար: Այդ ժամանակ  
արդեն ծափալվում է Անտանտի արյունալի արշավան-  
քը: Յեւ Պրուսիան, կազմակերպելով զորամասեր ճա-  
կատի համար, հայտարարում է ազգա-կազմակերպ-  
չական իր վայելուն տաղանդը:

Նա նշանակվում է 4-րդ բանակի հրամանատար  
և 1919 թ. հունվարի վերջին մեկնում է բանակ:

#### 4-ՐԴ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

4-րդ բանակն սպահնակում էր Արևելյան ճակատի  
աջ (հարավային) թևը: Այդ բանակն ամենավատթար  
դրության մեջ էր: Նրա զորամասերը նոր վերցրել  
էին Ուրալից: Բայց թշնամական տարրերը բանակը  
քայքայում էին ներսից: Հենց նոր էր վերջացել  
յերկու զնդերի խոսվությունը, վորի ժամանակ  
սպանվել էր Հեդ. ազգ. խորհրդի անդամ Լինդովը:  
Գնդերը թափթփված էին: Մինչդեռ հակառակորդը  
դիտավոր ուժերը կենտրոնացրել էր Շչադովոյի և  
Փորպոսս Բուզարինսկու ուսյոնում, ուր անցել էր  
կազակների զորային կառավարությունը և պատ-  
րաստվում էր հակահարձակման:

Փետրվարի սկզբներին Միխայիլ Վասիլևիչը  
ժամանեց Ուրալի և նշանակեց կայազորի պարագ:  
Բանակի բոլոր թերություններն ու հիվանդություն-  
ները նրա առաջ բացվեցին և նա հենց այդտեղ էլ

կարմիր բանակային ամբողջ մասսայի առաջ զորա-  
մասերի վատ վիճակի համար հրամանատարներին  
նկատողություն հայտարարեց: Հետևյալ որը նա  
«հրավեր» ստացավ ներկայանալ հրամանատարների  
ժողով և բացատրել իր վարմունքը: Միխայիլ Վասիլ-  
ևիչը, կախելով իր հաղիվ սպիտակեւ սկսած դու-  
խը, մտածեց թղթի վրա և դնաց:

Փայտաչեն տան յերկյորդ հարկում դանվող սեն-  
յակը լեփ-լեցուն էր հրամանատարներով: Սենյակը  
ծխախոտի ծխով լիքն էր, ալմուկ էր: Յերբ նա ներս  
ժտավ, բոլորը լռեցին: Նա բարևեց և նստեց նստա-  
րանի վրա: Վոչ վոք սիրտ չեր անում խոսել:

— Ընկերներ, — բանն ինչո՞ւմն է, — հարցրեց նա:

Վորոչ շփոթությունից հետո նրա վրա հարձակ-  
վեցին և սկսեցին կշտամբել, թե «ինչ վոր մարդիկ»  
են դալիս, սովորեցնում են վաստակավոր մարտական  
հրամանատարներին, նրանց պարադներ, մարշիրով-  
կաներ հրամցրեք: Ձղացմունքները չափն անցան,  
նրան սկսեցին սպառնալ. «Ձեզ դեռ քիչ են սովորեց-  
րել, Լինդովին մոռացել եք»...

Միխայիլ Վասիլևիչը վեր կացավ և լարված  
լուսթյան մեջ սկսեց խոսել իր հանգիստ, հնչուն,  
հստակ ձայնով.

— Նախ յե՛ս ձեզ հայտարարում եմ, վոր յես այս-  
տեղ բանակի հրամանատար չեմ: Բանակի հրամանա-  
տարն այսպիսի ժողովում ներկա լինել չի կարող և  
չպետք է լինի: Յես այստեղ կոմունիստական կու-  
սակցության անդամ եմ: Յեւ ահա յես այդ կուսակ-  
ցության անունից, մի կուսակցություն, վորն ինձ

ուղարկել ե աշխատելու բանակում, յես նորից պընդում են իմ բոլոր զիտողությունները զորամասերի իմ կողմից նշված թերությունների մասին... Դուք իմ հասցեյին սպասնալիքներ եյիք կարդում: Դուք ինձ վախեցնել չեք կարող: Յարական դատարանն ինձ չերկու անգամ մահվան ե ուղարկել և չի կարողացել ստիպել, վորպեսզի յես իմ համոզմունքները փոխեմ: Յես անդեն եմ, յես ձեր ձեռքումն եմ: Դուք կարող եք անել ինձ հետ ինչ վոր կամենաք: Բայց, յես հաստատ կերպով հայտարարում եմ այսօր ինձ վորպես հրամանատար այստեղ կանչելու մասին, վոր նման յերևույթներ կրկնվելու դեպքում ամենամանիննա կերպով պատժելու յեմ ընդհուպ մինչև գնդակահարություն... Այլևս վորեւե բան ունի՞ք,— հարցրեց նա և նստեց:

Ի՞նչը լուռ եյին, բայց նա հասկացավ, վոր նրա խոսքերը հարկ յեղած աղղեցությունը թողեցին:

\*\*\*

Չմեռվա միզապատ վաղ մի լուսաբաց եր, տափաստանում թիփի յեր, յերբ Միխայիլ Վասիլյեվիչը զորազույն գինյորական փափախը ղլխին և մուշտակը շինելի վրայից դցած՝ աղյուտանտի և սպտվիրատարների (ординарец) ուղեկցությամբ սահնակով ուղևորվեց Շչապովոյի մոտ տեղավորված զորքերի մոտ:

Չորս կողմը թափառում եյին կաղակները: Հագիվ ահնակը Ուրալ գետի սառուցի վրա յեր անցել, վոր լավեցին կրակոցների ձայներ և գնդակները շուրջը

վզողացին: Միխայիլ Վասիլյեվիչը սահնակի ծածկի տակից դուրս հանեց իր յեղյամով ծածկված բեխերը և յեղյամից դանդուր դարձած փափուկ մուղավական միբուքը և խկույն մի տեսակ ուրախացավ:

— Հրեն հա՛, կաղակները,— ասաց նա կապույտ աչքերը փայլեցնելով, ցույց տալով թաթմանը հագած ձեռքով:

Յերբ նրանք յելման դիրքերին մոտեցան, կռիվն արդեն սկսվել եր: Մուշտակը ձղելով Միխայիլ Վասիլյեվիչը բարձրացավ դանդակատունը, վորտեղ գտնվում եր հրետանու զիտակետը: Չանդակատանը խփում եյին շրայներով:

— Վո՞նց են շրայներները, հը՞,— ասում եր նա նայելով ծխի կլոր քուլաներին: Նա սլարդ տեսնում եր, վոր մարտը անհաջող ե դարդանում: Գնդերը հետ եյին դլորվում դեպի յելման դիրքերը:

Իր քիչ կազացող քայլվածքով Միխայիլ Վասիլյեվիչը շրջում եր զորամասերը և բացատրում եր, թե ինչից առաջացավ անհաջողությունը:

— Բայց վոչինչ, ամեն ինչ կարգի կընկնի,— ժպտալով ասում եր նա:

Յեվ նա, չինել հագած, խելքը արհեստավորի զեմքով բանակի այդ կարճահասակ հրամանատարը, կարմիր-բանակայիններին դուր յեկավ: Այն լուրը, թե նա յեղել և կովի ամենաթուևդ տեղում, շրջեց բոլոր գնդերը:

Մարտի 1-ին Փրուևդեն ուղիղ հեռադրաթելով գեկուցում եր ճակատի հրամանատարին. «Թչնամու

կենդանի ուժերի ջախջախման խնդիրը հույս ունեմ իրադործելու մեկ ամսվա ընթացքում»:

Նա այդ խնդիրը կատարեց մինչև Փարիզյան կոմունայի որը:

### ՖՐՈՒՆԶԵՆ ՈՒ ԶԱՊԱՅԵՎԸ

Դեռ բանակը կազմակերպվելու ժամանակ բանակի վերադարձավ Ռադմական ակադեմիան մտնելու իր անհանջող փորձից հետո Չապայեվը: Ակադեմիա նրան ուղարկել եր հին հրամանատարութունը վոչ այնքան Չապայեվին սովորեցնելու ցանկութունից զբղված, փորձան անհանդիստ պարտիզանից աղաավելու համար: Միխայիլ Վասիլյեվիչին նրա մասին բավական վատ բաներ էլին տեսել: Բայց զորամասերում Չապայեվին հիշում և սիրում էլին և Միխայիլ Վասիլյեվիչն այդ մասին նույնպես զիտեր:

Չապայեվը կարինես մտավ թաղիքե կոչիկներով, բաշղով, մի փոքր շիտթված: Միխայիլ Վասիլյեվիչն իրեն հատուկ վոչ վերավորական ուղղամտությամբ սկսեց հարցնել՝ «Իսկ ճի՞շտ ե, վոր դուք այսինչ և այսինչ բանն եք արել»...

— Այդպես յեղել ե, — Ժպտալով պատասխանեց Չապայեվը: — Այո, թերևս, չալին անցրել եմ... Այսինչ բանն ել արդեն զուր եմ արել...

Մի փոքր հետո նրանք աթոռների վրա իրար դիմաց նստած էլին, զգողված մաղերով, յերկուսն ել կարմիր և յերկարարբիս և ծիծաղկոտ Միխայիլ Վասիլյեվիչը քա՛հ-քա՛հ ծիծաղում եր, լսելով Չապայեվի պատմութունն այն մասին, թե նա ինչպես եր Ակադեմիա ընդունվում:

Միխայիլ Վասիլյեվիչը Չապայեվին նշանակեց 25-րդ Ղիվիզիայի հրամանատար:

### ԿՐԱՍՆԻ ՅԱՐ

Մարտին, Կուլչակը, իր զորամասերի կենտրոնացումը չվերջացրած, հանկարծ հարվածեց 2-րդ և 5-րդ բանակների ստիկին: 5-րդ բանակը խիստ պարտություն կրեց: Հակառակորդը գրավեց Ուֆան և Մամարայից 60 վերսա հեռավորության վրա յեք գտնվում:

Արևելյան ճակատի հարավային մասում յուրահատուկ զբոլթյուն ստեղծվեց. 1-ն, 4-րդ և Թուրքեստանի բանակը և 5-րդ բանակի նահանջող զորամասերը թիկունքներով միացան Սամարա-Որենբուրգ-Ուրալսկ նեղ տարածության վրա: Դրությունը վտանգավոր եր. հակառակորդը, յեթե նախաձեռնությունն իր ձեռքը վերցներ, կարող եր խփել բոլոր բանակների թիկունքին և Արևելյան ճակատը կջախջախվեր:

Այն ժամանակ ստեղծվեց այս բոլոր բանակներից քաղկացած Հարավային խումբ և այդ խմբի հրամանատար նշանակվեց Ֆրունզեն: Յեվ այստեղ նա Հայտնաբերեց իր ոպերատիվ հանճարը:

Նա Բուզուլուկի մոտ ստեղծեց հարվածային մի խումբ և ջախջախիչ հարված հասցրեց չափը կորցրած թշնամուն: 1919 թ. մայիսին վերցվեց Բուզուլուկյանը, մայիսի 13-ին՝ Բուզուլուման, մայիսի 17-ին՝ Բելեբեյը: Ֆրունզեն մնալով Հարավային խմբի հրամանատար անձնապես իր վրա վերցրեց Թուրքեստանի բանակի հրամանատարությունը և թշնամուն

չունչ քաշելու հնարավորութիւն չտալով շարժվեց  
դեպի Ուֆա:

Ուֆան վերցնելու հիմնական ուղերացիաները վի-  
ճակվեցին Չապայեվի 25-րդ դիվիզիային և 31-րդ  
դիվիզիային, վորոնք պետք է անցնէին Բելալա զե-  
տը Կրասնի Յար դյուղի մոտ:

Հունիսի 7-ին Միխայիլ Վասիլևիչը կարմիր  
բանակայինի ամառային դիմնաստորկա հաղած և  
զլխին պաշտպանական դույնի գլխարկ դրած, հեծած  
դունյան մի աշխետ ձի հասավ անցարանի վայրը  
Կրասնի Յարի մոտ, վորտեղ կենտրոնացել էին Չա-  
պայեվյան դիվիզիայի առաջին և յերկրորդ բրիգադ-  
ները: Հակառակորդը ուժեղ կրակ սկսեց հրանոթնե-  
րից: Անցարանի վայրում անպաղար յերևան էին  
պալիս հակառակորդի սավառնակները, վորոնք կրա-  
կում էին զնդացիւրներէից:

Անցարանում աշխատում էր միայն մի փոքր շո-  
ւենավ: Գետի մեծ տարածութիւն վրա յերևում էին  
հրացանները պատրաստի պահած կարմիր բանակա-  
յիններով լի նավակներ: Նավակների ցուռկին ցցված  
էին զնդացիւրներ:

Գիշերը մյուս ասիին կենտրոնացան Իվանովո-Վոդ-  
նեսենսկի 220-րդ դունդը— դիվիզիայի զարդը— և  
217-րդ դունդը: Սրանք հարձակվեցին հակառակորդի  
խրամատներէ վրա և կռվով դրավեցին Ալեքսանդ-  
րովկա և Նիժնիյե Տուրբալսի դյուղերը: Յերեկն  
անցավ այն ավր նաև 218-րդ դունդը: Հակառակորդը  
գուրս մղվեց Տուրբալսի Ստարայա դյուղից: Բայց  
մյուս առավոտ դարձացնելով կատաղի հրետանային

և զնդացրային կրակ, հակառակորդը մեր զնդերի  
դեմ նետեց յերերյան ու սպայական ընտիր զորամա-  
սեր:

Ռազմամթերք հասցնելը շատ դժվար էր: Մեր  
ճարտիկները մնացել էին համարյա առանց փամ-  
փուշաների: Հրամանատարը շարունակ կրկնում էր.  
«Չնահանջել— հիշեր, վոր ուղերվում միայն սվին-  
ներն են...»

Կռիվը կատաղի յեր: Յեւ մի բոպե մեր զորա-  
մասերը չլիմացան ու սկսեցին նահանջել դեպի դե-  
տը: Այդ ժամանակ խանդարված շլթաների միջև ձի  
հեծած յերևացին Ֆրունզեն, Չապաևը և սրանց հետ  
ևս մի քանի ձիավորներ: Նրանց խսկույն ճանաչեցին:  
Ֆրունզեն ձիուց իջավ և մարտիկից մի հրացան  
վերցնելով և այդ հրացանը բարձրացնելով հրաման  
տվեց «Առաջ, իմ հետևից»— և զնաց հակառակորդի  
վրա: Գնդերը նետվեցին նրա հետևից:

Չապաևը, վորը Միխայիլ Վասիլևիչից վոչ մի  
բայլ հետ չէր մնում, շարունակ բարկանում էր.

— Ընկեր հրամանատար, խկապես ալստեղից  
զնացեք. խկապես ձեր տեղն ալստեղ չէ:

Բայց Ֆրունզեն մարտից դուրս յեկավ միայն այն  
ժամանակ, յերբ հակառակորդը փախուստի դիմեց:

Մեր զորամասերի դեմ զործում էր մի ամբողջ  
հակադրելիայից բաղկացած ավիացիա: Յերբ Միխա-  
յիլ Վասիլևիչը վերադառնում էր դեպի անցարանը,  
նրա մոտ տրաքից աւրոպայանից դցած մի ուումբ և նա  
վլխից կոնտուզիա ստացավ: Այս կռվում զնդակով  
վլխից վիրավորվեց նաև Չապաևը: Բայց Ուֆան

վերցվեց և կուլչակովչինայի բախտը կանխորոշվեց:

Այս ոպերացիայի համար Միխայիլ Վասիլյեվիչը պարզեատրվեց Կարմիր դրոշի իր առաջին շքանշանով: Այնուհետև նա ամբողջ Արևելյան ճակատի հրամանատարն էր, ընդհուպ մինչև Չեկարինսկը կորմիրների կողմից զրավելը և Ուրալյան լեռներից այն կողմն անցնելը:

### ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄԸ

1919 թ. ոգոստոսին, Արևելյան ճակատը յերկու ուղղութեան—Միբիրի և Թուրքեստանի ուղղութեաններ—բաժանվելու կապակցութեամբ Միխայիլ Վասիլյեվիչը նշանակվեց Թուրքեստանի ճակատի հրամանատար:

Չնայած համաճարակին և մատակարարման ապարիզում յեղած արգելքներին, սեպտեմբերի առաջին կեսին կարմիր զորքերը զրավեցին Ուսկը, Ակյուբինսկը, չըջապատեցին և մասամբ վոչնչացրին, բնասամբ էլ զերի վերցրին Կուլչակի հարավային բանակը: Այդ օրերին ծանր կորուստ էր Չապակի մահը. հերալ զետի ալիքներում: Բայց սեպտեմբերի 13-ին Մուզաշորսկայա կայարանում միացան 1-ին բանակը և Թուրքեստանի զորքերը: Թուրքեստանի դռները բաց էլին:

Մենք տեսնում ենք Ֆրունզեյին բաց շինելով և գլխին փափախ դրած, ծիծաղկոտ— նա կարմիրբանակայինների հետ միասին փախտ և սղոցում շաբթորյակում Տաշքենտի ճանապարհին: Ահա նա

նստած և Թուրքեստանի ճակատի շտաբում սպիտակ բլուզ հագած և լուծում և հերթական ոպերատիվ խնդիրները: Ահա նա կարճահասակ լեռնային ձի հեծած ընդունում և Կուլչայի կայազորի պարադը: Յեվ ահա մենք նրան արդեն տեսնում ենք վորպես ոսպմական դիվանագետ, դաշիրներով չերկեղիկ հագած, դոտիից կախած դաշույն և կեռ արևելյան Թուրք, նա լսում և բուխարական եմիրի մինխտրների խորամանկ խոսքերը և հաղիվ նկատելի մի Ժպիտ խրվել մնացել և այնտեղ աչքերի անկյուններում:

\*\*\*

Ֆրունզեյի ձեռքն ամեն տեղ և: Դեռ նոր են վերջ տվել Ուրալի կազակների վերջին պատվարին Գուբևսկ քաղաքում, բայց դեռ մնացել և Սեմիրեչեյի սպիտակ-դավարդիական ճակատը: Այդ ճակատին էլ վերջ տվին, բայց հարկավոր և ողնութեան զնալ Ֆերգանայի դեհկաններին և Չախշախել բասմաչներին: Իսկ ահա այստեղ էլ Բուխարայի աշխատավոր մասսաներն ապստամբել են եմիրի դեմ, վորին աջակցում են անգլիացիք: Յեվ Ֆրունզեյի պանծալի զորքերն շտապում են նրանց ողնութեան:

Իսկ միևնույն ժամանակ վորպես կուսակցութեան ու խորհրդային իշխանութեան լիազոր Թուրքեստանի գործերի առթիվ, նա գլխավորում և մեծապետական չովինիզմի և տեղական բուրժուական նացիոնալիզմի դեմ մղած պայքարը, ստեղծում և դաստիարակում և կուսակցական յերիտասարդ կազմակերպութեան կազմերը: Հարկավոր և դպրոցներ ստեղծել ազգային լե-

գունեերով: Իսկ հարազատ Իվանովո-Վոդնեսենսկի ու-  
յանի Փարրիկաներն արդեն պահանջում են բամբակ,  
բամբակ: Յե՛վ պետք է նոր ձևով կառուցել բազմա-  
թիվ ազդու թյունների պատկանող միլիոնավոր ու մի-  
լիոնավոր աշխատավորների ամբողջ կյանքը, աշխա-  
տավորներ, վորոնք դարերով ճնշված են յեղել կոլո-  
նիզատորական և նահապետական-ֆեոդալական հա-  
բաբերություններով:

Միջին Ասիայում ցուցաբերած իր ամբողջ դոր-  
ծանելության մեջ Միխայիլ Վասիլյեվիչը իրեն ցույց  
է տվել վորպես Լենինի ու Ստալինի փայլուն աշա-  
կերտ և խոշորագույն պետական խելք: Նրա անունը  
ընդմիջա կմնա միլիոնավոր մարդկանց հիշողության  
մեջ, վորպես ճնշված ժողովուրդների մեծ բարեկամ:

Յերբ 1921-1922 թվերին նա վորպես արտակարգ  
լիազոր մեկնեց Թյուրքիա, Տրապիզոնից արդեն նրա  
մասին լուրեր ելին տարածվել, թե

— Գալիս և ուսական փաշա, յալլաչ Ֆրունզեն,  
վորբ ըլլորին մատչելի յե, խոսում է հասարակ ժո-  
ղովրդի հետ, շատ զեղեցիկ է, լավ...

Պատահական չե, վոր նա Ստալինի մերձավորա-  
յույն դործակիցն է յեղել ԽՍՀՄ-ի առաջին Սահ-  
մանադրությունն ստեղծելու ժամանակ և այժ հարցի  
առթիվ զեկուցող է յեղել Ուկրաինայի Խորհուրդների  
VIII համագումարում:

### ՊԵՐԵԿՈՊ ՅԵՎ ԶՈՆԳՍՐ

Լենինը սխալ էր համարում այն անհողությունը,  
վոր ցուցաբերում էր Տրոցկին, վորը դերի յեր դար-

ձել բուրժուական մասնազետների ձեռքում, զեպի  
Ղրիմում ապաստանած Վրանդելի դործունեյությունը:  
Նույնը բաղմիցս և համառորեն մատնանչում էր ընկեր  
Ստալինը:

1920 թ. ամառը Վրանդելն իր արտասահմանյան  
տերերի ցուցումով Ղրիմից դուրս է սողում և աշ-  
նանը սկսում է անմիջապես սպառնալ Ուկրաինայի և  
Դոնեցի ավազանին: Ստեղծվում է Հարավային ճա-  
կատ, վորտեղ կենտրոնանում են խոշոր ուժեր: Հրա-  
մանատար նշանակվում է Ֆրունզեն:

Առաջին Հեծյալ բանակը արագացրած յերթով  
արթվում էր լեհական ճակատից զեպի Հարավային  
ճակատը: Ճանապարհին տեղեկություն է ստացվում,  
վոր Բուդյոնին կամ Վորոչիլովը կանչվում են խոր-  
հրդակցության զլխավոր հրամանատարի մոտ: Վո-  
րոչիլովը չողեքարչով շտապ մեկնեց Խարկով:

Գլխ. հրամանատարի վազոնը կանդնած էր կա-  
յարանի այն կողմը գտնվող ուղիի վրա: Վորոչիլովը  
յեռանդուն կերպով սանդուխներով վեր բարձրացավ,  
մտավ սալոնը: Նա տեսավ քարտեզի վրա կախ դցած  
ցցուն մազերով մի դուլս, վորը ինչ վոր բանով շատ  
ճանոթ էր թվում: Ֆրունզեն իր կապույտ աչքերով,  
վորոնց անկյուններում թաղնված էր ծիծաղկոտ կըն-  
ծիտների մի ցանց, վեր նայեց և Վորոչիլովը զար-  
սանքից քիչ մնաց խեղդվեր:

— Արսենիյ:

— Վորոչյա:

Հուզված աչքերը փայլեցնելով, նրանք բռնեցին  
իրար ձեռքից, ապա իրար ամուր գրկեցին և նորից



Պայեցին իրար: 1906 թվին նրանք յերկուսն ել կու-  
սահցության IV համագումարի մասնակիցներ եյին,  
մի ամիս միասին անց կացրին Ստոկհոլմում և շատ  
բարեկամացան, բայց բախտը նրանց 14 տարով բա-  
ժանեց: Կարող եր արդյոք Կլիմենտ Յեֆրեմովիչը  
յենթադրել, թե լեզենդար Ֆրունզեն հենց «նույն  
այն» ընկեր Արսենիյն է:

«Մենք սկսում ենք քննել բարոն Վրանդելին վճռա-  
կան ու վերջին հարված հասցնելու ստրատեգիական  
պլանը, — հիշում ե ընկեր Վորոշիլովը: Յեվ յերեկվա  
քնդհատակյա աշխատող բուլչեիկ Արսենիյը իսկական  
գորավարի դարձանալի սրարդությամբ և հեղինակու-  
թյամբ մանրամասնորեն զարդացնում է Կարմիր բա-  
նակի մոտալուտ վճռական ուղեբացիաները...»

Վրանդելի Հյուսիսային Տարիայում դռնվող  
ուժերը մասամբ վոչնչացվեցին, մասամբ դուրս մղ-  
վեցին պարանոցի այն կողմը: Գոնեցի ավազանի հա-  
մար մղված մարտերում լինելով 77-րդ դուռնդը: 1920  
թ. նոյեմբերի 3-ին Հարավային ճակատի բանակները  
ընդհուպ կանգնեցին Սիվաչի ափերին, սկսած Գենի-  
չեակից և վերջացրած Խորլիի ուսյունով:

Պարզ ցրտաչունչ մի առավոտ Միխայիլ Վասիլե-  
վիչը Մելիտոպոլից, վորտեղ այժմ դռնվում եր ճակա-  
տի շտաբը, ուղեվորովեց զորամասերի դասավորման  
վայրը: «Միջոյոյց այն բոլոր ճանապարհները, —  
հետադայում հիշում եր Միխայիլ Վասիլեվիչը, — վո-  
րոնք հյուսիսից դեպի հարավ եյին դնում, լի եյին  
դեռ նոր տեղի ունեցած արյունալի դեպքերի հետքե-  
րով: Ամենից առաջ աչքի եյին ընկնում հակայական

բանակությամբ սպանված ձիերը: Ամբողջ տափարա-  
կը, մանավանդ ճանապարհի մոտ յեղած մասը, տա-  
ռացիորեն ծածկված եր ձիու լեշերով: Յեռ հիշում եմ  
մի քանի անգամ սկսեցի հաշվել, թե վորքան լեշ  
կանցնենք մենք յերկու-յերեք բոպեյի ընթացքում և  
ամեն անգամ տասնյակներով եյի հաշվում:

Յերբ տեսնում եյիր մեր շինականի այս ամենա-  
մոտ բարեկամների դերեզմանոցները, հողումդ և դի-  
տակցությանդ առաջ հարց եր առաջ գալիս. ի՞նչ կլի-  
նի ապա հետագայում, ինչպես պիտի մենք դուրս հա-  
նենք ձիակազմի այս հակայական կորուստի վառ-  
տից...»

Այո, նա ամեն ինչ տեսնում եր: Մարդիկ կիսա-  
մերկ եյին, առանց տաք կերակրի ու խմելիքի, չկար  
վառելիք: Հեծյալ զորամասերում կերը պակասում  
եր: Բայց վոչ վոք չեր դանդառվում: Տրամադրու-  
թյունն աշխույժ եր: Այդ հարձակման բանակ եր:  
Վիթխարի աշխատանք եր կատարվում Չոնդարի պա-  
լանոցը առանց վորեւ տեխնիկական միջոցների գրո-  
հելու նախապատրաստման ասպարիզում:

Միխայիլ Վասիլեվիչը մտածում եր, թե ինչ լավ  
կլիներ կրկնել Ֆելդմարշալ Լասիի 1732 թ. ման-  
յովը ընդդեմ Ղրիմի խանի, այսինքն հակառակորդին  
չըջանցել Արարաթի նեղ սրաքի վրայով, վորը զնու-  
մ եր Գենիչեակից դեպի Կերչի թերակղզին: Բայց այդ  
մանյովը կրկնել չեր կարելի: Արարաթի սրաքը դը-  
տընվում եր հակառակորդի նավերի ուժակոծման  
տակ Ադովի ծովի կողմից, իսկ Ադովի մեր Ֆլոտե-  
րան ազնության հասնել չեր կարող Տագանրոզի ծո-

ցը կարած սառնամանիքի պատճառով: Մնում էր գրոհով վերցնել Պերեկոպը և Չոնդարը:

Նոյեմբերի 7-ի լույս 8-ի գիշերը 52-րդ Ղեկավարացի զորամասերը անց կացան Սիվաչի այն կողմը և կովով տիրեցին Լիտովսկի թերակղզու ամբու-թյուններին: Պերեկոպի պարսնոցը բռնի կերպով անցնելու ուղերայիկները սկսվեցին նոյեմբերի 9-ի գիշերը 52-րդ, 15-րդ և Ղլխավորապես 30-րդ Ղեկավարացի զորամասերի կողմից, վորոնցից վերջինը պետք է գրոհեր Պերեկոպի պատնեշը՝ ճակատից:

Միխայիլ Վասիլյեվիչն անձամբ ղեկավարում էր ուղերայիկները 15-րդ Ղեկավարացի շտաբից: Նա կանգնած էր ափին: Հետևը արվող գյուղի բոսորագույն փայլը ընկել էր ջրի վրա, զենքի վրա, մարդկանց գեմքերի վրա: Հրանոթների այնպիսի մի վորոտ էր, վորը ձուլվում և մի անընդհատ դղրդյուն էր կազմում— հարկավոր էր գոռալ իրար լսելու համար: Միխայիլ Վասիլյեվիչը մեկ կարգադրություններ էր անում, մեկ լուռ կանգնած աչքերը սեւում էր այնտեղ, վորտեղ մոլեղնում էր հրանոթների մահաբեր կրակը:

Հանկարծ ղեկուցադիր ստացվեց, վոր ջրի մակերեսը բարձրանում է և ջուրը հեղհեղան ծածկում է ծանծաղուտը: 15-րդ և 52-րդ Ղեկավարաների զնդերը հանգնած էին Սիվաչի այն կողմում կտրվելու սպառնալիքի առաջ: Ֆրունզեն կարգադրություն արեց անհատուղ գրոհել Պերեկոպի պատնեշը 51-րդ Ղեկավարացի զորամասերի միջոցով, սպառնալով ամենախիստ սպառնալիքներ, յեթե կատարումը ձգձգվի: Միաժամանակ

նա 7-րդ Հեծյալ Ղեկավարացին հրաման արձակեց իր կույն նստել ձիերը և անցնել Սիվաչի այն կողմը 15-րդ և 52-րդ Ղեկավարաներին ողնելու համար:

Միայն առավորոյան ժամը 5-ին ղեկուցում ստացվեց, վոր 51-րդ Ղեկավարացի զորամասերը գիշերված թամ 30 բոպեյին տիրել են Պերեկոպի պատնեշին և հակառակորդը նահանջել է Ֆուչանի դիրքերը: Այս դիրքերը համառ կովից հետո գրավվեցին նոյեմբերի 10-ին: Իսկ 11-ի գիշերը 30-րդ Ղեկավարացի զնդերը կողմից սկսվեց Չոնդարի դիրքերի նշանավոր գրոհը: Առավորոյան՝ արյունահեղ կովից հետո Ղեկավարացի զորամասերն այն ափին էյին և թշնամու հեղքերով սրընթաց կերպով հարձակվում էյին Չոնդարի վրա:

Մեր կորուստները շատ ծանր էյին— առնվաղն 10 հազար սպանված և վիրավոր, բայց հերոսական հետևազորն ու կարմիր հեծելազորը ներս խուժեցին Ղլրիմ և Ֆրունզեն արդեն նոյեմբերի 15-ին կարողացավ Լենինին հեռադիր ուղարկել, վոր զորամասերը մտել են Սևաստապոլ:

### ՌԵՇԵՏԻԼՈՎԿԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՌԵՆԵՏԱԾ ԴԵՊԻՐ

Միխայիլ Վասիլյեվիչը արդեն Ուկրաինայի դինված ուժերի հրամանատար էր, Ուկրաինայի բուչե-վիկները կի-ի և Ուկր. կի-ի նախագահության անդամ և Համ Կ(բ)Կ կի-ի անդամ: Տարիքի շնորհիվ նա մի փոքր ծանրացել էր, միրուքը անխել, կրում էր այն ժամանակվա սրածայր բոգատիրկա և ուղ-ժական դիմնաստյորկա կրճքին յերեք կարմիր «խոսակցականներով»: Հունիսի կեսերին նա մեկնեց Պոլ-

տավայի ռայոնը հսկելու Մախնոյի բանդաների լիկվիդացիայի ընթացքին:

Վոլոստային միլիցիայի պետի և պատվիրատարի «Լեզեկցու» թյամբ նա մտալ Ռեչետիլովկա դյուղը: Զինված մարդկանց հենց առաջին խմբից, վորին նրանք մոտեցել էլին, ձայն լսվեց.

— Ուղբե՞ր եք:

— Ուկրաինայի հրամանատարը, — իջված, թեև վաղ շատ ճիշտ պատասխանեց միլիցիայի պետը:

Մարդկանց մի ակնթարթում այլալված դեմքից բոլոր յերեքն էլ գլխի ընկան, թե ուր են իրենք բնկել և ձիերը շուռ տայով սկսեցին քառատրոփ արշավով հեռանալ: Նրանց հետևից սկսվեց հրացանաձգություն, մի րոպեյից հետո սկսվեց հետապնդում: Պատվիրատարն սպանված վայր ընկավ, միլիցիայի պետը առջ ընկավ: Յերկու մախնոյական ավելի թափով ձիերի վրա սկսեցին Միխայիլ Վասիլյեվիչի հետևից հասնել: Ճանապարհի շրջադարձին նա ձիուց վայր ցատկեց և մատուցերի մի կրակոցով սպանեց հետապնդողներից մեկին, իսկ մյուսը հետ դարձավ:

Եփոթվելով, վոր անախորժ դրուձյան մեջ է ընկել, Միխայիլ Վասիլյեվիչը ժամանելով մեր խմբի շարքը աշխատում էր իրեն այնպես սրահել, կարծես վոչինչ չի պատահել: Բայց այստեղ նկատեցին, վոր նրա կողքը արյունոտ է, իսկ յերբ շինելը հանեցին տեսան, վոր 7 տեղից ծակված է:

#### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Միխայիլ Վասիլյեվիչն աշխատում էր Ուկրաինայում մինչև 1924 թիվը: Բայց իհարկե, նրա ազդեցու-

թյունն այն ժամանակն էլ տարածվում էր շատ ավելի հեռու քան մեկ հանրապետության սահմանները: Նա սուղվորական հերոս էր, լեզենդար Ֆրունզե, լենինյան յերկաթե այն կոհորտային պատկանող առաջնորդ, վորն իր մեծ հոր Լենինի մահից հետո, համախմբվեց նրա դործի լավագույն չարունակող Ստալինի շուրջը:

Ֆրունզեն Ստալինին ճանաչում էր վոչ միայն դորպես Լենինի՝ ընդհատակի ու Հոկտեմբերի ժամանակվա լավագույն աշակերտի: Վորպես զինվորական սարդ նրան հայտնի յեր նաև այն բացառիկ դերը, վոր Կարմիր բանակի ստեղծման դործում և նրա հաղթանակներում խաղացել է ընկեր Ստալինը: Ինչպես հայտնի յե 1923-1924 թվականներին կուսակցությունն անհաշտ պայքար էր մղում տրոցկիստների դեմ: Այս պայքարում Ֆրունզեն Ստալինի ամենամոտիկ դործակիցների թվումն էր:

Դեռ 1921 թվից սկսած, յերբ սկսվեց յերկրի զինված ուժերի շինարարության խաղաղ ժամանակաշրջանը, Միխայիլ Վասիլյեվիչը հեղեղականորեն և անխոնջ կերպով պայքարում էր Մարքսի-Լենինի՝ պատերազմի մասին յեղած թեորիաների նշանակության տրոցկիստական ժխտման դեմ, բանակի շինարարության ամբողջ դործը բուրժուական մասնագետներին փերավտահելու դեմ, փարթամ Ֆրադյորության, իսկ դործով կծծիության դեմ: Տրոցկին շեր հավատում բաղմամիլիոն, տեխնիկայով ոժտված, իսկապես սոցիալիստական բանակ ստեղծելու հնարավորությանը, մի կողմ էր քաշվել ամեն մի դրական աշխատանքից և քաղաքականապես քայքայում էր ամենից քիչ կայուն կադրերին:

Յեւ 1924 թ. կառավարութիւնն ու կուսակցութիւնը Ֆրունզեյին դրին յերկրի զինված ուժերի դրութիւնը նախ վորպես ԽՍՀՄ-ի Հեղ. ուղմ. խորհրդի նախագահի տեղակալ և ապա 1925 թ. հունվարին վորպես նախագահ:

Յեւ այստեղ նա ծավալվեց դուրսացնական իր ամբողջ ուժով մեկ վորպես ժողովրդի խոշորագունն առաջնորդներից մեկը:

Ֆրունզեն աշխատում էր Ստալինի անմիջական ղեկավարութեամբ և սկիզբ դրեց ստալինյան վիթխարի պլանի իրագործմանը, այն է՝ հզոր, տեխնիկապես ստեղծած սոցիալիստական բանակի ստեղծմանը:

Յերկրի տնտեսական ու տեխնիկական այն ժամանակվա մակարդակի համեմատ դեռ շատ բան չէր կարելի իրագործել, շատ բանի մասին կարելի չէր միայն յերազել: Բայց տարիների ընթացքում հզոր սոցիալիստական բանակ ստեղծելու նաև այս ստալինյան պլանն իրագործվեց արդեն ընկեր վորոշիլովի ղեկավարութեամբ, վորը Ֆրունզեյի մերձավոր բարեկամն ու հաջորդն է:

Ֆրունզեն յերկրի ինդուստրացման ստալինյան պլանի համար մարտնչող էր, վորովհետև միայն այդ պլանն էր ապահովում բանակի տեխնիկական հզորութիւնը և մեր անկախութիւնը կապիտալիստներից, այսինքն միայն այդ պլանն էր ապահովում սոցիալիզմի հալթանակը մեր յերկրում:

Ֆրունզեն յեղում էր այն բանից, վոր ապագա պատերազմը կլինի մարդկանց հսկայական մասսաների պատերազմ և վորոնում էր կազմակերպական այն-

պիսի ձևեր, վորոնք ընդդրկում են ռազմական ոււուացմամբ միլիոններ: Այն ժամանակվա պայմանների համեմատ մենք մեծ կանոնավոր բանակ ունենալ չէինք կարող և Ֆրունզեն լայն կերպով զմրդացրեց ոււուացման տերիտորիալ սխտեմը: Բայց նա աւում էր, թե յեթև մենք հարուստ լինենք, կանոնաւոր ու տերիտորիալ գորքերի հարաբերակցութիւնը պետք է լինի հոգուա կանոնավոր գորքերի: Այժմ այդ իրագործվել է այնպիսի մասշտաբով, վորի մասին Ֆրունզեն միայն յերազել կարող էր:

Ֆրունզեն յեղում էր այն բանից, վոր ապագա պատերազմում ճակատի ու թիկունքի հասկացողութիւնները խիստ կերպով կփոխվեն: Առանձնապես նա պնդում էր, վոր բարձրացվի տրանսպորտի աշխատանքը, լայն իմանալով արանսպորտի նշանակութիւնը յերկրի պաշտպանութեան համար: Յեւ Ֆրունզեն քիչ աշխատանք չի նվիրել բնակչութեան ռազմական պատրաստութեան գործին: Նա դարդացնում է խրախուսում էր ռազմական կամավոր ընկերութիւնները և սպորտային կազմակերպութիւնները: Այժմ այդ գործը հսկայական թափ է ստացել:

Ֆրունզեն սովորեցնում էր, վոր մեր բանակի տակտիկայի հիմքը պիտի կազմի հարձակման տակտիկան: Յեւ Ֆրունզեյի այս գրույթն իրոք հանդեսանում է մեր բանակի տակտիկայի հիմքը, մի բանակ, վորը թշնամուն պիտի հարվածի հենց նրա տերիտորիայում:

Ֆրունզեն ասում էր, թե բանակի կուլտուրական և քաղաքական մակարդակի բարձրացումը մեր հաղ-

թանակի պայմաններից մեկն է: Նա այդ դործը բա-  
նակում կազմակերպելուն քիչ աշխատանք չի նվի-  
րել: Յեվ պետք է ասել, վոր մեր բանակն այժմ  
աշխարհիս ամենակուլտուրական ու գիտակից բա-  
նակն է և այդ պատճառով անհաղթելի յե:

### ՅՐՈՒՆՁԵՑԻ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԱՆՔԸ

Միխայիլ Վասիլյեվիչը շատ ամբողջական բնավո-  
րություն էր: Նա բանվոր դասակարգի իսկական  
զավակն էր, կարիքի ու պայքարի զավակը, անհա-  
վատալի զրկանքների և հերոսական ջանքերի զավա-  
կը: Աշխատավոր մասսաները, հեղափոխությունը,  
կուսակցությունը նրա համար հարազատ տարերք  
էին, բնական միջավայր: Ամբողջ կյանքում նա  
միայն սրանց շահերն էր պաշտպանում, նա սրանցից  
թագցնելու վոչինչ չուներ և այդ պատճառով շատ  
սկզբունքային ու ճշմարտասեր մարդ էր: Կարելի յե  
ասել, վոր նա նույնքան համարձակ էր նայում ճշ-  
մարտության յերեսին, վորքան մահվան յերեսին:


Նրան հատուկ չէին «ինքնացուցադրումը», կեղծ  
ինքնասիրությունը, նախանձը, առհասարակ մանր  
զգացմունքները: Այդ պատճառով նա միշտ կենսու-  
բախ էր:

Նրա մեջ ներդաշնակորեն զուգորդվում էին  
համեստությունը, նույնիսկ ամաչկոտությունը, յե-  
թե խոսքը նրա մասին էր, կամքի հսկայական ուժի  
և կայծքարե սրտի հետ: Երբ նա դործ ուներ վտան-  
գի կամ թշնամու հետ: Նրա հաստատակամությունը

ցուցադրովի չէր, կեղծ չէր: Այդ հաստատակամու-  
թյունը հենվում էր թերրիական կանխատեսության  
վրա, փաստերի գիտության վրա, մասսաների ուժի  
նկատմամբ ունեցած անսահման հավատի վրա: Իսկ  
մասսաները նրա համար ինչ վոր անդեմ բան չէին,  
այլ պայքարող, տառապող, ավելի լավ վիճակ վո-  
րոնող և խոչընդոտները հաղթահարող մի մարդկու-  
թյուն:

Սրա համար ամբողջ կուսակցությունը և ամ-  
բողջ ժողովուրդը նրան սիրում էին: Նա մեռավ  
1925 թ. հոկտեմբերի 31-ին յերկարատև հիվանդու-  
թյունից ու ոպերացիայից հետո: Յեվ յերբ նրա ա-  
ճյունը թաղում էին Կրեմլի պատում, նրա դործը  
չարունակող և նույնքան համեստ և ուժեղ մարդկանց  
առնակն մեկ արցունք չէր, վոր դլորվեց ի նշան  
նրա հավերժ հիշատակի:

Կարմիր հրապարակում Փրունգելի հիշատակին  
նվիրված ճառում ընկեր Ստալինն ասաց. «Ի դեմս  
ընկ. Փրունգելի մենք կորցրինք մեր ժամանակի ա-  
մենամաքուր, ամենաազնիվ և ամենաանպիճ- չեղա-  
փոխականներից մեկին»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ստալինը Ֆրունզեյի մասին	3
Մ. Վ. Ֆրունզեյի ինֆեակեմսագրությունը	5
Թանկագին բարեկամ Միխայիլ Վասիլյեվիչ Ֆրունզեյի հիշատակին	13
Մ. Վ. Ֆրունզեյն Կարմիր Բանակի բարեկամն ու առաջնորդն է	23
Միխայիլ Վասիլյեվիչ Ֆրունզեյ	35



Թարգմանիչ՝ Մ. Հովհաննիսյան  
Պատ. խմբագրեր՝ Հ. Դոնոյան  
Տեխ. խմբագրեր՝ Լ. Ոհանյան  
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Գլավլիտի Լեալսը՝ Վ. — 2021 Հրատ. № 4673  
Պատվեր 530. Տիրած 6000.  
Թուղթ 64×110 Տպագր. 2,4 մամ.  
Մեկ մամուլում 51200 նշան.

30

ՀՀ Ազգային գրադարան



NL0937858

25 03 1939

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

100 1  
3744

Михаил Васильевич

**ФРУНЗЕ**

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.